

Երաժշտության առարկայական ծրագիրը

1. Ընդհանուր մաս

ա) Ներածություն

Երաժշտությունն աշակերտի գեղարվեստական ու գեղագիտական դաստիարակման լավագույն միջոցն է: Այն հարստացնում է աշակերտի հոգևոր ներաշխարհը, ձևավորում է նրա սեփական վերաբերմունքը բարության, գեղեցկության նկատմամբ: Երաժշտությունն աշակերտին հաղորդակից է դարձնում համամարդկային արժեքներին և, միաժամանակ, նպաստում է ազգային գիտակցության ձևավորմանը: Երաժշտությունը, հուզական բնույթի հետ մեկտեղ, ունի նաև ճանաչողական գործառույթ և դրա ուսումնասիրումը նպաստում է ոչ միայն զուգորդական, այլ նաև տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, երաժշտությունն աշակերտին վարժեցնում է խմբային աշխատանքին, կարգ ու կանոնին, կարգապահությանը: Բացի այդ, որպես սեփական գիրն ունեցող հաղորդակցական լեզու, երաժշտությունն աշակերտի համար ստեղծում է ցանկացած հասարակության հետ շփվելու լայն հնարավորություններ:

բ) Երաժշտության դասավանդման նպատակներն ու խնդիրները

Երաժշտության դասավանդման նպատակն է.

- Աշակերտին ձևավորել որպես կիրթ, կուլտուրական մարդու՝ երաժշտության ոլորտում նրան համապատասխան գիտելիք տալու ճանապարհով:
- Աշակերտի գեղարվեստական-երաժշտական դաստիարակումը՝ ժողովրդական ու դասական երաժշտության նմուշներին ծանոթացնելու ճանապարհով:
- Նրա ներգրավումը ստեղծագործական գործունեության մեջ և դրա համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների զարգացում:

Այս կրթական նպատակներից ելնելով՝ դպրոցում վրացական պարի ուսուցումը նախատեսում է հետևյալ խնդիրների լուծում.

- Երաժշտությունը լսելու կարողության ձևավորում:
- Երաժշտական ստեղծագործության նկատմամբ սեփական վերաբերմունքի ու երգարվեստի քննարկման կարողության ձևավորում:
- Երևակայական-զուգորդական մտածողության զարգացում:
- Երաժշտական լսողության ու հիշողության, ռիթմի զգացողության զարգացում:
- Երաժշտական գրերի՝ որպես համընդհանուր հաղորդակցության միջոցի, ուսումնասիրում:

Հանրակրթական դպրոցում Երաժշտություն առարկան նախատեսում է աշակերտին ընդհանուր և ոչ թե մասնագիտական գիտելիքի հաղորդում: Բոլոր երեխաները տարբեր երաժշտական տվյալներ ունեն, դրա համար, դասընթացի բազմազան ուղղություններն աշակերտին հնարավորություն են տալիս զարգացնել և ի հայտ բերել սեփական հետաքրքրությունները:

Երաժշտության զուգորդական բնույթը նպաստում է այդ առարկայի ինտեգրմանն այլ գիտական ճյուղերին, օրինակ, տեսողական, թատերական արվեստին, պարին, պոեզիային, գեղարվեստական գրականությանը, պատմությանը, մաթեմատիկային,

ինֆորմատիկային, ֆիզիկային և այլն, ինչը գրավչություն է ընձեռում ուսումնական գործընթացին:

զ) Երաժշտության դասավանդման աստիճանների բնութագրությունը

Ըստ Երաժշտության ուսումնական պլանի, հանրակրթական դպրոցի երեք աստիճաններում էլ նախատեսված է Երաժշտության դասավանդումը. տարրական ու բազային աստիճանում՝ պարտադիր, իսկ միջնակարգ աստիճանում՝ կամընտրական առարկաների տեսքով:

Տարրական աստիճանում առանձնապես մեծ է Երաժշտության առարկայի կարևորությունը, երբ դեռևս ամբողջովին չեն դրսևորվել երեխայի բնածին, բնական կարողությունները, բնագոյները և անհրաժեշտ է բացահայտել, առաջնորդել դրանք: Երեխայի համար հարազատ տարբեր գվարձալի ակտիվությունների միջոցով տեղի է ունենում նրա հետաքրքրումը երաժշտությամբ: Այս աստիճանում Երաժշտության առարկան նախատեսում է կիրարկել աշակերտների ստեղծագործական կարողությունները, նրանց ընդգրկել համատեղ ստեղծագործական գործընթացներում և հաղորդել տրված աստիճանում նախատեսված գիտելիքները:

Բազային աստիճանում Երաժշտության դասաժամերին ձեռք բերած գիտելիքը և կարողություններն ու հմտությունները դեռահասի համար դյուրին են դարձնում սեփական անձի որոնման և ինքնահաստատման գործընթացը: Դա դեռահասի զարգացման ու նրա հետաքրքրությունները ճիշտ կառավարելու լավագույն միջոցն է, և զգալիորեն կմեղմացնի այն քննադատական վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ, որը կարևոր է այդ տարիքի համար: Պետք է նկատի առնել նաև այն, որ արվեստի ստեղծագործությունը հասկանալու կարողությունը ենթադրում է նաև տարբեր կարծիքների և աշխարհայացքների նկատմամբ հանդուրժողականություն:

Միջնակարգ աստիճանում աշակերտին հնարավորություն է տրվում, սեփական հետաքրքրությունների համաձայն, ընտրել առաջարկված դասընթացներից մեկը:

**Երաժշտության ուսումնական դասընթացի ամփոփիչ արդյունքները
տարրական և բազային աստիճանում**

Տարրական աստիճանում		Բազային աստիճանում
Ձեռք բերած գիտելիքների և կարողությունների ու հմտությունների հիման վրա		
Գործնական կարողություններ ու հմտություններ	<p>Վեցամյակի վերջում աշակերտը.</p> <p>Գործածում է երաժշտական լեզվի տարրերը, մարմնի շարժումը՝ ինքնարտահայտման համար:</p> <p>Համագործակցում է ուրիշների հետ, ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր նպատակին հասնելու համար:</p>	<p>Իննամյակի վերջում աշակերտը.</p> <p>Ստեղծագործականորեն է օգտագործում երաժշտական ու դրամատիկական արվեստի արտահայտչական միջոցները՝ ինքնարտահայտման համար:</p> <p>Ներգրավված է անհատական ու տարբեր տեսակի խմբային աշխատանքների մեջ:</p>

<p>Հաղորդակցություն ու մեկնաբանություն</p>	<p>Երաժշտական ստեղծագործության վերաբերյալ հայտնում է սեփական կարծիքն ու հիմնավորում է այն:</p> <p>Գիտակցում է, որ երաժշտությունը հաղորդակցության և ինքնարտահայտման միջոց է:</p>	<p>Վերլուծում է երգարվեստի նմուշը, մեկնաբանում է, թե ինչ նպատակով է գործածված կոնկրետ արտահայտչամիջոցը:</p> <p>Գիտակցում է, որ արվեստը աշխարհայացքի արտահայտման և հաղորդակցման միջոց է:</p>
<p>Երաժշտության ընկալումը համատեքստում</p>	<p>Քննարկում է վրաց և համաշխարհային երգարվեստի հայտնի ստեղծագործությունները, արվեստի տարբեր բնագավառներն ու դրանց կապերը:</p>	<p>Համեմատում է տարբեր դարաշրջանների ու ոճերի ստեղծագործությունները և քննարկում է դրանց միջև առկա նմանություններն ու տարբերությունները: Համեմատում և քննարկում է տարբեր երաժշտական ոճերը, ուղղությունները, կատարման եղանակները, երաժշտության դերը հասարակության կյանքում: Ճանաչում է երգարվեստի հայտնի ներկայացուցիչներին:</p>

դ) Երաժշտության առարկայի դասավանդման կազմակերպումը

Երաժշտությունը, որպես պարտադիր առարկա, դասավանդվում է I-IX դասարաններում: I- III և V-VII դասարաններում դրա դասավանդմանը հատկացվում է 2 ժամ, իսկ IV դասարանում՝ 1 ակադեմիական ժամ: VIII-IX դասարաններում Երաժշտությունը դասավանդվում է յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում 3 ժամ տևողությամբ: Տրված սխեման արտացոլում է Երաժշտության առարկայի ժամաբաշխումն ըստ դասարանների.

Դասարան	Ժամերի քանակն I կիսամյակում	Ժամերի քանակը II կիսամյակում
I	2	2
II	2	2
III	2	2
IV	1	1
V	2	2
VI	2	2
VII	2	2
VIII	—	3
IX	3	—

ե) Երաժշտության դասավանդման ուղղությունների նկարագրությունը

Երաժշտության դասավանդումը տարածվում է երեք ուղղությամբ.

1. Գործնական կարողություններ ու հմտություններ:
2. Հաղորդակցություն, մեկնաբանություն:
3. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում:

Բոլոր ուղղությունների շրջանակներում դասավանդումն ընթանում է զուգահեռաբար ու սերտ փոխկապակցված:

Գործնական կարողություններ ու հմտություններ

Այս ուղղության շրջանակներում աշակերտները ձեռք են բերում և ձևավորում են գործնական հմտություններ, որոնք ծառայում են նրանց ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու կիրարկմանը:

Աշակերտները հաղորդում են լսած երաժշտական ստեղծագործությունների հուզական ու տեսական բովանդակությունը կամ իրենց շրջապատում ստացած երաժշտական տպավորությունները: Դրա համար ընտրում և գործածում են արտահայտման պատշաճ ձևերն ու արտահայտչամիջոցները, որոնց հետ ծանոթացել են Երաժշտության դասաժամին: Բացի այդ, Երաժշտության դասաժամին աշակերտներն սկսում են տիրապետել ծրագրման, կազմակերպման, խմբային աշխատանքի հմտություններին:

Հաղորդակցություն, մեկնաբանություն

Երաժշտությունը, որ ճանաչված է որպես հաղորդակցական լեզու, բազմապիսի ու բազմակի մեկնաբանությունների հնարավորություն է տալիս: Այս ուղղության շրջանակներում աշակերտները սովորում են երաժշտություն լսել, գնահատել, բանավեճի, քննարկման ժամանակ՝ պատշաճ գրագետ լեզվով ու վարվելակերպի նորմերի պահպանությամբ, հստակորեն արտահայտել միտքը, հիմնավորել սեփական հայեցակետը, սկսում են տիրապետել նաև կոլեկտիվ աշխատանքի մեթոդներին, զարգանում է նրանց գնահատման և ինքնագնահատման կարողությունը: Աշակերտները ներկա են գտնվում ու մասնակցում են տարբեր միջոցառումների: Սովորում են, որ երաժշտական արվեստի ստեղծագործությունը միշտ արտահայտում է որոշակի գաղափար:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Այս ուղղության շրջանակներում աշակերտները տեղեկատվություն են ստանում լսած ստեղծագործությունների՝ վրաց (ժողովրդական ու մասնագիտական) ու համաշխարհային երաժշտության մշակույթի հայտնի նմուշների մասին, և դրանք կապում են մշակութային ու պատմական համատեքստի հետ: Այդ տեղեկատվությունը տարբեր եղանակներով առնչվում է ամենօրյա իրադարձությունների հետ, աշակերտների փորձառության հետ: Նրանք ծանոթանում են վրաց ու համաշխարհային երաժշտական մշակույթի ներկայացուցիչների՝ կոմպոզիտորների ու կատարողների, երաժշտական գործիքների, տարբեր երաժշտական կոլեկտիվների, հետ:

զ) Երաժշտության գնահատումը

Տնային ու դասարանային առաջադրանքների բաղադրիչները

Գնահատվում են հետևյալ գիտելիքներն ու կարողությունները.

- Երգարվեստի սովորած նմուշների իմացություն:
- Երաժշտության պատմության և տեսության ընդհանուր հարցերի իմացություն:
- Երաժշտական գրերի իմացություն:
- Երաժշտական տերմինաբանության իմացություն:
- Երաժշտական-համակարգչային ծրագրերի իմացություն:
- Ստեղծագործականություն:
- Իմպրովիզացիա:
- Երաժշտություն լսելու հմտություն:
- Երաժշտական լսողություն:
- Երաժշտական հիշողություն:
- Ռիթմի զգացողություն:
- Ներկայացնելու (շնորհանդեսի) կարողություն:
- Սոցիալական կարողություններ:
- Սեփական կարծիքի հիմնավորման կարողություն:
- Հանդուրժողականություն:

Գիտելիքները և կարողություններն ու հմտությունները գնահատվում են հետևյալ ակտիվություններով.

Տնային առաջադրանքներ

- Նյութ գտնել:
- Ռեֆերատ պատրաստել:
- Գրախոսություն գրել:
- Սովորել տեքստը (գրական ու երաժշտական):
- Առաջադրանքը կատարել երաժշտական-համակարգչային ծրագրի գործածությամբ և այլն:

Դասարանային առաջադրանքներ

- Մասնակցել ստեղծագործական գործունեությանը. երգ, իմպրովիզացիա, երաժշտական-դրամատիկական կոմպոզիցիաներ, երաժշտական-համակարգչային ծրագրեր ստեղծել:
- Մասնակցել համերգի, ներկայացման փորձերին:
- Նախագիծ պատրաստել:
- Երաժշտություն լսել ու կատարել դրա հետ կապված առաջադրանքները:
- Մասնակցել սեփական և ուրիշի կատարման/ստեղծագործության քննարկմանը:
- Քննարկել երաժշտական ստեղծագործության համատեքստը:
- Տարբեր ակտիվություններ պլանավորել ու պատրաստել:
- Ներկայացնել սեփական աշխատանքը, ստեղծագործական գործունեությունը:

- Տարբեր առաջադրանքներ կատարելիս՝ գործածել երաժշտական գրերը և այլն:

Ամփոփիչ առաջադրանքների բաղադրիչը

Ամփոփիչ առաջադրանքի բաղադրիչն առնչվում է ուսանման-ուսուցման արդյունքի հետ: Այս բաղադրիչում պետք է ստուգվեն մեկ ուսումնական հատվածի (թեմա, գլուխ, պարագրաֆ, հարց) ուսումնասիրման ու մշակման հետևանքով նվաճված արդյունքները: Կոնկրետ ուսումնական միավորն ավարտելիս՝ աշակերտը պետք է կարողանա դրսևորել Երաժշտության չափորոշչով սահմանված գիտելիքները և կարողություններն ու հմտությունները: Համապատասխանաբար, ամփոփիչ առաջադրանքներով պետք է ստուգվեն Երաժշտության **չափորոշիչներով սահմանված արդյունքները:**

Ամփոփիչ առաջադրանքների տիպերը.

Չափորոշչի պահանջները բավարարելու համար՝ խորհուրդ է տրվում գործածել ամփոփիչ առաջադրանքների բազմազան ձևեր: Երաժշտության ամփոփիչ առաջադրանքների տիպերը կարող են լինել.

- Համերգ/ներկայացում:
- Վիկտորինա:
- Ջեկուցում-ռեֆերատ:
- Դասախոսություն-համերգ:
- Ներկայացում:
- Թեստավորում:
- Քննություն:
- Նախագիծ:

Աշակերտի կողմից իրագործված նախագծի հնարավոր թեմաները.

Թեմատիկ ներկայացում/համերգ կազմակերպել: Հեռուստահաղորդում, ռադիոհաղորդում, բեմադրություն պատրաստել: Թերթ, ամսագիր, երաժշտական արժույթի պատրաստել: Երգի, երաժշտական ստեղծագործության կամ այլ թեմայի վերաբերյալ տեսահոլովակ նկարահանել: Հրավիրել հայտնի կոմպոզիտորի, երգչի, ռեժիսորի: Կազմակերպել ու ղեկավարել հանդիպումը և այլն:

Պահանջներ, որոնք պետք է բավարարեն ամփոփիչ առաջադրանքները

- Առաջադրանքի յուրաքանչյուր տիպին պետք է կցված լինի դրա գնահատման ընդհանուր խորագիրը:
- Ընդհանուր խորագիրը պետք է ճշտվի կոնկրետ առաջադրանքի պայմանի և անցած նյութի նկատառմամբ:
- 10 միավորը պետք է բաշխվի խորագրում ներառված չափանիշների միջև:
- Պետք է մատնանշված լինեն չափորոշչի այն արդյունքները, որոնց ստուգմանը ծառայում է ամփոփիչ առաջադրանքը:

Նմուշ. համադասարանցիներին երաժշտական ստեղծագործությունը ծանոթացնելը

Ներկայացում պատրաստե՛ք և ձեր համադասարանցիներին ծանոթացրե՛ք գործիքային համերգի նմուշը: Դրա համար.

1. Փնտրե՛ք, լսե՛ք և ընտրե՛ք անվանված ժանրի ա՛յն երաժշտական ստեղծագործությունը, որը ձեզ դուր է գալիս:
2. Ձեր նպատակն է ընտրված երաժշտական ստեղծագործությունը ներկայացնել համադասարանցիներին և իմանալ նրանց վերաբերմունքը:
3. Ընտրե՛ք և ձեր համադասարանցիներին ծանոթացրեք ա՛յն հատվածները, որտեղ հիմնական թեմատիկ նյութը հնչում է ինչպես մենանվագի հետ, այնպես էլ նվագախմբի պարտիայում, նաև ա՛յն հատվածներին, որտեղ երաժշտական նյութի զարգացումն առանձնապես հետաքրքիր է թվում ձեզ:
4. Ընտրած ստեղծագործության մասին փաստացի նյութ գտեք՝ դարաշրջան, ոճ, կոմպոզիտոր, ստեղծագործություն (ժանր, ոճ, մենանվագ, կատարողների կազմը), կատարող, դիրիժոր, կատարողների կոլեկտիվ, դահլիճ (ըստ ցանկության):
 - Աշխատեք այնպես բաշխել երաժշտական և խոսքային նյութը, որ չնվագի աշակերտների հետաքրքրությունը: Ըստ անհրաժեշտության, գործածե՛ք նաև տեսողական նյութ՝ տեսագրություն, լուսանկար, երաժշտական տեքստ:
 - Ներկայացման ժամանակ, ինչպես ակնկալվում է, ընտրված ստեղծագործության հետ կապված բոլոր հարցերը չեք կարող մանրամասնորեն քննարկել: Աշխատե՛ք ձեր ընկերներին համառոտ ծանոթացնել ստեղծագործությանն առնչվող հիմնական տեղեկատվությունը: Ներկայացումը պատրաստելիս՝ նկատի՛ առեք նրանց հետաքրքրությունները, գիտելիքները: Ուշադրություն դարձրե՛ք ա՛յն հարցերին, որոնք կնպաստեն ստեղծագործության նկատմամբ ձեր ընկերոջ հետաքրքրության արթնացմանը և դրա ավելի լավ ընկալմանը:
 - Պատրաստվե՛ք ներկայացման վերջին մասի՝ հարց-պատասխանի, համար: Նախօրոք սահմանե՛ք հնարավոր հարցերը և ձևակերպե՛ք պատասխանները: Չիուսափե՛ք զուգահեռներ անցկացնելուց: Կարող եք պատասխանել նաև երաժշտական նյութով: Այստեղ կբացահայտվի, թե որքանով լավ եք տիրապետում նյութին:
 - Տեխնիկական հարցերը կարգավորելու համար՝ աջակցություն խնդրե՛ք օգնականից:

Չափանիշներ

1. Նյութի տիրապետում:
 2. Հաղորդակցություն:
 3. Կազմակերպչական հարցեր:
 4. Ստեղծագործականություն:
1. Նյութի տիրապետում (գիտելիքներ ու կարողություններ) 0-3
 - Պահանջին համապատասխան երաժշտական ստեղծագործություն ընտրել:
 - Հիմնական թեմատիկ նյութն (գլխավոր և օժանդակ թեմաներ) արտացոլող երաժշտական դրվագներ ընտրել:

- Բազմապիսի տեղեկատվություններ ներկայացնելիս՝ ստեղծագործության հետ կապված տարբեր հարցեր ներկայացնել:

2. Հաղորդակցություն 0-3

- Դրսևորել սեփական վերաբերմունքը երաժշտական ստեղծագործության նկատմամբ:
- Նյութը լսարանի համար մատչելի տեսքով ներկայացնել և հետաքրքրել լսարանին:
- Տեղեկատվությունը հաղորդել հստակորեն, հասկանալի կերպով:
- Հարցերին պատասխանելիս՝ ճշտել:

3. Կազմակերպչական հարցեր 0-1

- Տեխնիկական հարցերի կարգավորում:

4. Ստեղծագործականություն 0-3

- Ստեղծագործության հետ կապված տեղեկություններից ընտրել տեղեկատվություն ու համադասարանցիներին ծանոթացնել դրանք:
- Ելույթ ունենալիս՝ ծրագրել նյութի (ձայնային, տեսողական, խոսքային) փոխարինումը:
- Արտահայտել սեփական վերաբերմունքը ստեղծագործության նկատմամբ:

Գլուխ XLIX

Տարրական աստիճանի առարկայական իրազեկությունները

I դասարան Երաժշտություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
--	-----------------------------------	--

<p>Երաժշտ. I. 1. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործածել դրանք ռիթմիկ-հնչերանգային վարժությունների մեջ:</p> <p>Երաժշտ. I.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:</p> <p>Երաժշտ. I.3. Աշակերտը կարող է դիմել արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն հաղորդելու համար:</p>	<p>Երաժշտ. I. 4. Աշակերտը կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել լսած երաժշտական ստեղծագործության նկատմամբ:</p> <p>Երաժշտ. I.5. Աշակերտը կարող է գործածել սովորած երաժշտական տերմինները:</p> <p>Երաժշտ. I.6. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:</p> <p>Երաժշտ. I.7. Աշակերտն ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին հարգանքով վերաբերվելու կարողություն ունի:</p>	<p>Երաժշտ. I. 8. Աշակերտը կարող է լսած ստեղծագործությունը կապել առօրյայի հետ:</p> <p>Երաժշտ. I.9. Աշակերտը ճանաչում է սովորած երաժշտական գործիքները:</p> <p>Երաժշտ. I.10. Աշակերտը կարող է տարբերել շրջակա միջավայրում լսած ձայները:</p>
--	--	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններն ու հմտություններ

Երաժշտ. I.1. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործածել դրանք ռիթմիկ-հնչերանգային վարժությունների մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- ճանաչում է միջավայրի երաժշտական ու ոչ երաժշտական հնչյունները:
- Տարբերում է բարձրաձայն ու ցածրաձայն հնչեղությունը:
- Ձայնը, գործիքը հնչեցնում է բարձրաձայն ու ցածրաձայն, երկարատև ու ընդհատելով, համառոտակի:
- Մեկ տոնով երգելով՝ կրկնում է պարզ ռիթմիկ գծագիրը, փոխում է հնչյունների բարձրությունը:
- Տարբերում է ռիթմիկ ու ոչ ռիթմիկ թակոցը:
- Ծափահարությամբ, թակոցով կրկնում է պարզ ռիթմիկ գծագիրը:
- Ծափահարությամբ, ոտքի հարվածով առանձնացնում է տակտի ուժեղ պահը:

Երաժշտ. I.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երգելով կրկնում է հնչյունները, երաժշտական արտահայտությունները:
- Ծափահարությամբ, երգեցողությամբ հետևում է երաժշտությանը, ուսուցչի երգին, նվագակցությանը:
- Նվագակցությամբ կամ ուսուցչի հետ, պարզ միաձայն երգեր է երգում:
- Պարզ միաձայն երգեր է երգում, համադասարանցիների հետ:

- Երգեցողության ժամանակ ճիշտ է արձագանքում ուսուցչի ցուցումներին (*ցածրաձայն, բարձրաձայն, արագ, դանդաղ*):

Երաժշտ. I.3. Աշակերտը կարող է դիմել արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն հաղորդելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ձայնի, շարժման, դիմախաղի, ժեստի, ծափահարության, աղմուկի միջոցով արտահայտում է այս կամ այն տրամադրությունը:
- Լսած երաժշտական ստեղծագործությունը հարմարեցնում է տարբեր խաղերին (աչքախփուկ, թաքնվոցի և այլն) և կազմում համապատասխան տեքստը:
- Մարմնի շարժումով փոխանցում է երաժշտությունից առաջացած հուզմունքը:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Երաժշտ. I.4. Աշակերտը կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել լսած երաժշտական ստեղծագործության նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դրական կամ բացասական վերաբերմունք է դրսևորում լսած ստեղծագործության նկատմամբ:
- Ծանոթ և անծանոթ մեղեդիները տարբերում է իրարից:
- Լսելիս ծափահարությամբ, երգեցողությամբ, շարժումով հետևում է երաժշտությանը:
- Երաժշտությունից առաջացած տրամադրությունը, հուզմունքը փոխանցում է նկարով:

Երաժշտ. I.5. Աշակերտը կարող է գործածել սովորած երաժշտական տերմինները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսելիս ճիշտ է արտաբերում սովորած տերմինները:
- Անհրաժեշտության դեպքում, պարզաբանում է դրանք տարրական ձևով:
- Անծանոթ տերմին, բառ լսելիս՝ դրանց նշանակությունը ճշտելու նպատակով, հարցեր է տալիս:

Երաժշտ. I.6. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է խաղերին, դասարանի հանդեսին, թեմատիկ միջոցառումներին:
- Ներկա է գտնվում համերգներին, բեմադրություններին:

Երաժշտ. I.7. Աշակերտն ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին հարգանքով վերաբերվելու կարողություն ունի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշի երգի, խոսքի ժամանակ պահպանում է վարվելակերպի նորմերը:
- Ստեղծագործական գործընթացում աջակցում և խրախուսում է համադասարանցուն (*երգ, էսյուդ, պար, համերգային կատարում*):

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ. I.8. Աշակերտը կարող է լսած ստեղծագործությունը կապել առօրյայի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է սովորած մանկական երգերը:
- Մտաբերում է, թե որտեղ, ինչ միջավայրում է լսել այս կամ այն երաժշտական ստեղծագործությունը:
- Մտաբերում է իր սիրելի երաժշտական ստեղծագործությունները:
- Երաժշտական ստեղծագործության բովանդակության հետ կապված հարցեր է տալիս, մտաբերում է նման պյուժեն, կերպարին:
- Համապատասխան տեսողական նյութը կապում է երաժշտական ստեղծագործության հետ և մտաբերում է սեփական տպավորությունները (լուսանկար, տեսագրություն...):

Երաժշտ. I.9. Աշակերտը ճանաչում է սովորած երաժշտական գործիքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է ծանոթ երաժշտական գործիքները:
- Դրանք ճանաչում է ըստ ձևի:
- Տարբերում է գործիքների հնչեղությունը:

Երաժշտ. I.10. Աշակերտը կարող է տարբերել շրջակա միջավայրում լսած ձայները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պարզում է ձայնի առաջացման աղբյուրը (*հեռախոսագանգ, մեքենայի արգելակ..., թռչնի ծլվլոց, տերևների շրշում...*) և նմանակում է դրան:
- Սահմանում է ձայնի հնչեղության տևողությունը (երկարատև, կարճատև) և կրկնում է այն:
- Ձայնի նկատմամբ վերաբերմունք է դրսևորում (*ինձ դուր է գալիս, դուր չի գալիս*):

Ծրագրի բովանդակությունը

Ռիթմիկ-հնչերանգային վարժություններ.

- Հնչյուն (կարճատև - երկարատև, երաժշտական – ոչ երաժշտական...), ձայնային հզորություն (բարձրաձայն – ցածրաձայն):
- Երաժշտական լեզվի տարրեր. մեղեդի (դիատոնիկ), ռիթմ (քառորդ և մեկ ութերորդ տևողություններ, 2-4 տակտ), երկչափ և եռաչափ մետր:

Երգեցողություն.

- Երգել նվագակցությամբ:
- Երգել անհատականորեն կամ համադասարանցիների հետ:
- Պարզ միաձայն երգեր՝ մանկական, ժողովրդական և դասական երգացանկից, օրինակ. «Ժուժունա ծվիմա», «Ճրելո պեպելա», «Լալե», «Մգե շինա»: Մ. Դավիթաշվիլի՝ «Չիտո, չիտո, նացարա», «Էս սածղալի կուրդղելի», Լ. Իաշվիլի՝

«Կրիճի, կրիճի», Գ. Դարախվելիձե՝ «Փիփքերի» («Փաթիլներ»), Բ. Գուրգուլիա՝ «Աչու, աչու», Բ. Բրամս՝ «Նանա», Վ.Ա. Մոցարտ՝ «Նանա», Ջ. Պիերպոնտեր՝ "Jingle Bells"; "Twinkle Twinkle Little Star" և այլն:

Տրամադրության փոխանցում.

- Ուրախություն, տխրություն, վախ, զայրույթ և այլն:
- Ձայնով, շարժումով, դիմախաղով, ժեստով:

Երաժշտական տերմիններ.

- Բարձրաձայն, ցածրաձայն, արագ, դանդաղ:
- Կոմպոզիտոր, պիես, համերգ, փորձ, նվագախումբ, խումբ, դիրիժոր, մենակատար, նվագակցություն:
- Սովորած երաժշտական գործիքների անվանումները:

Ձայնի արձակման աղբյուր.

- Բնություն, փողոց, տուն:

Միջոցառումներ.

- Դասարանի հանդեսը՝ նոր տարվա, գարնան, աշնան թեմաներով:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում.

- Տեղեկատվություն. երգի տեքստը, սյուժեն, հետաքրքիր դրվագներ հայտնի կոմպոզիտորների կենսագրությունից:

Ժողովրդական ու դասական երաժշտական գործիքներ.

- Սրինգ, թմբուկ, պարկապզուկ:
- Դաշնամուր, ֆլեյտա, քսիլոֆոն:

Երաշխավորված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր, հատվածներ դասական ստեղծագործություններից, մանկական ծրագրային պիեսներ, օրինակ, «Մեսովիրուլի» պարկապզուկով, «Նանա», «Բավնանա», «Ճրելո պեպելա», «Ժուժունա ծվիմա մովիդա» (եռաձայն տարբերակ), «Ախ, Լազարե, Լազարե», «Մզե շինա», «Սուրբ Աստված» տաղարանը, թմբուկով «Երգչախումբ», օսական պարային «Մինդի», ֆրանսերեն մանկական երգ "Frere Jacques", հոգևոր "Ride the chariot", Ջ. Փալիաշվիլի, Բ. Կեճաղմաձե՝ Վրաստանի պետական օրհներգը, Ջ. Փալիաշվիլի՝ «Վրացական» պար «Վերջալույս» օպերայից, Ս. Յինցաձե՝ կվարտետային մինիատյուրա «Սաճիդառ»/«Լալե»/«Բնդի-մինդի», Ռ. Լադիձե՝ «Օրհներգ մայրենի լեզվին», նվագախմբային պիես «Սաճիդառ», Բ. Ս. Բախ՝ «Պարկապզուկ», «Կատակ» (ֆլեյտայի մենանվագով) #2 շարանվագից, Բ.Վ. Գլուկ՝ «Օրֆեուս» օպերայից «Մեղեդի» ֆլեյտայի համար, Բ. Հայդ՝ դաշնամուրային սոնատ HOB.37, ռե մաժոր, I մաս, Վ.Ա. Մոցարտ՝ Մենուետ ֆա մաժոր, Է. Գրիգ՝ «Լեռան թագավորի

քարանձավը» «Պեր-Գյունտ» շարանվագից, Պ. Չայկովսկի՝ «Փոքր կարապների պարը» «Կարապների լիճը» քալետից, «Փոքր զինվորների երթը» «Մանկական այլումի» ցիկլից, Ն. Ռիմսկի-Կորսակով՝ «Կելայի թռիչքը», Կ. Սեն-Սանս՝ «Փիղը» «Կենդանիների դիմակահանդեսը» շարքից, Լ. Բեթհովենի մանկական երաժշտությունը և այլն:

II դասարան Երաժշտություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ. II.1. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործածել դրանք ռիթմիկ-հնչերանգային վարժությունների մեջ:</p>	<p>Երաժշտ. II.4. Աշակերտը կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել լսած երաժշտական ստեղծագործության նկատմամբ:</p>	<p>Երաժշտ. II.9. Աշակերտը կարող է տարբերել ստեղծագործական մասնագիտություններն ու կապել դրանք արվեստի կոնկրետ նմուշների հետ:</p>
<p>Երաժշտ. II.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:</p>	<p>Երաժշտ. II.5. Աշակերտը կարող է գործածել սովորած երաժշտական տերմինները:</p>	<p>Երաժշտ. II.10. Աշակերտը կարող է լսած ստեղծագործությունը կապել առօրյայի հետ:</p>
<p>Երաժշտ. II.3. Աշակերտը կարող է դիմել արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն հաղորդելու համար:</p>	<p>Երաժշտ. II.6. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:</p>	<p>Երաժշտ. II.11. Աշակերտը ճանաչում է սովորած երաժշտական գործիքները:</p>
	<p>Երաժշտ. II.7. Աշակերտն ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին հարգանքով վերաբերվելու կարողություն ունի:</p>	<p>Երաժշտ. II.12. Աշակերտը կարող է տարբերել շրջակա միջավայրում լսած ձայները:</p>

	<p>Երաժշտ. II.8. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը զգացմունքներ ու տրամադրություն արտահայտելու միջոց է:</p>	
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ

Երաժշտ. II.1. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործածել դրանք ռիթմիկ-հնչերանգային վարժությունների մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մեկ տոնով երգելով՝ կրկնում է պարզ ռիթմիկ գծագիրը, փոխում է հնչյունների բարձրությունը, տեմպը:
- Տարբերում է դանդաղ և արագ տեմպերը:
- Կոնկրետ երաժշտական դրվագները նկարագրում է ըստ տեմպի, ձայնային հզորության:
- Ծափահարությամբ, թակոցով կրկնում է պարզ ռիթմիկ գծագիրը:
- Համադասարանցիների հետ «նվագում է» խաղալու գործիքներից կամ/և տարբեր առարկաներից կազմված «համույթում», «նվագախումբում»:

Երաժշտ. II.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երգեցողությամբ հետևում է համադասարանցիների, ուսուցչի երգին, երաժշտական նվագակցմանը:
- Երգելով կրկնում է երաժշտական արտահայտությունները:
- Երգի առանձին արտահայտությունները կատարելիս՝ փոխարինում է համադասարանցիներին:
- Համադասարանցիների հետ միասին երգում է հանրաճանաչ մեղեդիներ ու միաձայն երգեր:
- Արձագանքում է Երաժշտության ուսուցչի ցուցումներին (*ցածրաձայն, բարձրաձայն, դանդաղ, արագ, միասին, սկզբից...*):

Երաժշտ. II.3. Աշակերտը կարող է դիմել արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն հաղորդելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Չայնի, շարժման, պարի, դիմախաղի, ժեստի, խաղի միջոցով արտահայտում է այս կամ այն տրամադրությունը:
- Գործիքի հետ շփվելու, աղմուկի, ծափահարության, նկարի միջոցով արտահայտում է նույն տրամադրությունը:
- Երաժշտական ստեղծագործությունից ստացած տրամադրությունը հաղորդելու համար, ուրիշների հետ միասին պարզ էտյուդներ է բեմականացնում՝ ավելացնելով համապատասխան հանպատրաստից տեքստը:

- Մարմնի շարժումով փոխանցում է երաժշտությունից առաջացած հուզմունքը:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Երաժշտ. II.4. Աշակերտը կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել լսած երաժշտական ստեղծագործության նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դրական կամ բացասական վերաբերմունք է դրսևորում լսած ստեղծագործության նկատմամբ:
- Կրկնում է երաժշտական դարձվածքը, պարզ ռիթմիկ գծագիրը:
- Ծանոթ և անծանոթ մեղեդիները, թեմաները տարբերում է իրարից:
- Երկրորդ անգամ լսելիս՝ ծափահարությամբ, երգեցողությամբ, պարով հետևում է երաժշտությանը, «դիրիժորություն» է անում լսելիս:
- Երաժշտությունից առաջացած տրամադրությունը, հուզմունքը փոխանցում է նկարով և, հնարավորության սահմաններում, կենդանացնում է այդ նկարը:

Երաժշտ. II.5. Աշակերտը կարող է գործածել սովորած երաժշտական տերմինները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսելիս ճիշտ է արտաբերում սովորած տերմինները:
- Անհրաժեշտության դեպքում, պարզաբանում է դրանք:
- Անծանոթ երաժշտական գործիքի, հասկացության անվանումը ճշտելու նպատակով հարցեր է տալիս:

Երաժշտ. II.6. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանի հանդեսին, թեմատիկ միջոցառումներին՝ Նոր տարի, գարուն, աշուն:
- Մասնակցում է դպրոցի հաշվետվական համերգին:

Երաժշտ. II.7. Աշակերտն ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին հարգանքով վերաբերվելու կարողություն ունի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշի երգի, խոսքի ժամանակ պահպանում է վարվելակարգի նորմերը:
- Խնամքով է վերաբերվում ուրիշի աշխատանքին:
- Նկատի է առնում տարբեր մտքերը:

Երաժշտ. II.8. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը զգացմունքներ ու տրամադրություն արտահայտելու միջոց է:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է երաժշտություն լսելուց առաջացած տպավորությունների մասին:
- Երաժշտական հատվածի մեղեդին, դինամիկան, տեմպը, ռիթմը կապում է կոնկրետ տրամադրության հետ:

- Հասկանում է համադասարանցիների կողմից երգով, ցածրաձայն երգով փոխանցված տրամադրությունը, զգացմունքը:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ. II.9. Աշակերտը կարող է տարբերել ստեղծագործական մասնագիտություններն ու կապել դրանք արվեստի կոնկրետ նմուշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է կոմպոզիտորի, նկարչի, քանդակագործի, պոետի, գրողի մասնագիտություններն ու անվանում է նրանց հետ կապված մեկ կամ ավելի ստեղծագործություն:
- Ճանաչում է իր շրջապատում առկա արվեստի ստեղծագործությունները:
- Արվեստի նմուշը տեսնելուց, լսելուց հետո, անվանում է հեղինակի մասնագիտությունը:

Երաժշտ. II.10. Աշակերտը կարող է լսած ստեղծագործությունը կապել առօրյայի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մտաբերում է, թե որտեղ, ինչ միջավայրում է լսել իր սիրելի երաժշտական ստեղծագործությունները:
- Պատմում է երաժշտական ստեղծագործության հետ կապված ասմունքը, պատմությունը, բովանդակությունը և պատասխանում է դրան վերաբերող հարցերին:
- Հարցեր է տալիս երաժշտական ստեղծագործության հեղինակի, սյուժեի, դարաշրջանի, կատարողի վերաբերյալ:
- Մտաբերում է, թե որ հերոսի հետ է առնչվում երաժշտական ստեղծագործությունը:
- Տեսողական նյութը (*լուսանկար, տեսանյութ*) կապում է երաժշտական ստեղծագործության հետ և մտաբերում է սեփական տպավորությունները:

Երաժշտ. II.11. Աշակերտը ճանաչում է սովորած երաժշտական գործիքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երաժշտական գործիքը ճանաչում է ըստ դրա ձևի:
- Հասկանում է մեներգի ժամանակը:
- Շարժմամբ կատարում է դրանցով նվագելու նմանակում:

Երաժշտ. II.12. Աշակերտը կարող է տարբերել շրջակա միջավայրում լսած ձայները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է բնական և արհեստական ձայները:
- Ճիշտ է սահմանում յուրաքանչյուր ձայնը (*ծլվիչ, սուլոց, կրճտոց...*):

Ծրագրի բովանդակությունը

Ռիթմիկ-հնչերանգային վարժություններ.

- Երաժշտական լեզվի տարրեր. մեղեդի (դիատոնիկ), ռիթմ (կես, քառորդ, մեկ ութերորդ տևողություններ, ընդմիջում), ձայնային հզորություն (դինամիկ մանրամասնություններ), ռիթմ, տեմպ (արագ-դանդաղ), բարեհունչ, ոչ բարեհունչ հնչեղություն:

Երգեցողություն.

- Երգել նվագակցությամբ:
- Միաձայն երգեր՝ ժողովրդական, մանկական և դասական երգացանկից, օրինակ. «Լազարե», «Մալամի չիտուներ», «Բավնանա» (օրորոցային), «Մախսուկս պիրվելադ», «Էս ակվանի խարատուլի», Մ. Դավիթաշվիլի՝ «Մանանաս սիմֆերա» («Մանանայի երգը»), Գ. Ցաֆաձե՝ «Անա-բանա» «Վերա թաղամասի մեղեդիները» կինոնկարից, Լ. Բաշվիլի՝ «Կոմիչի, կոմիչի կոմարա», Մ. Օթիաշվիլի՝ «Նոե բարուս կիորբանի», «Ժուժունա ծվիմա», «Ճրելո պեպելա», Լ. Բեթհովենի մանկական ստեղծագործությունները, Ռ. Ռոջերս՝ "Do, Re, Mi"; "Alphabet", հայերեն մանկական երգ՝ «Քեռին եկավ մեր բակը» և այլն:

Տրամադրության փոխանցում.

- Չայնով, շարժումով, դիմախաղով, ժեստով, պարով, խաղով:
- Էտյուդներ կատարել:

Երաժշտական տերմիններ.

- Մեղեդի, ռիթմ, տևողություն, ընդմիջում, տեմպ:
- Տեմպեր. Allegro՝ արագ, Adagio՝ դանդաղ:
- Դինամիկ մանրամասնություններ. Forte բարձրաձայն, Piano՝ ցածրաձայն:
- Կոմպոզիտոր, պիես, համերգ, փորձ, նվագախումբ, դիրիժոր, մենակատար, նվագակցում, բալետ, օպերա:
- Սովորած երաժշտական գործիքների անվանումները:

Աշխատանքային ձևեր.

- Անհատական և խմբային:

Չայնի արձակման աղբյուր.

- Բնություն, փողոց, համերգասրահ, տուն:

Միջոցառումներ.

- Դասարանի հանդեսը:
- Հանրային համերգ, ներկայացում:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում.

- Ստեղծագործության վերաբերյալ տեղեկատվություն. տեքստը, պլուժեն, հեղինակը:
- Ստեղծագործական մասնագիտությունները ճանաչելը. նկարիչ, կոմպոզիտոր, պոետ և այլն:

Երաժշտական գործիքներ.

- Փանդուրի, չոնգուր (քառալար), դիպլիպիտո, տավիդ, թավջութակ, կիթառ, հարվածային գործիքներ, շշակ:

Լսելու նյութ.

- Ժողովրդական երգեր, հատվածներ վրաց և արտասահմանյան ստեղծագործություններից, մանկական երաժշտական ծրագրային պիեսներ, բնութագրական հատվածներ հայտնի երաժշտական ստեղծագործություններից, օրինակ, «Բատոնեբո» («Պարոնայք»), «Միսա տուրա», «Շինա որգիլ», «Շեն խար վենախի» տաղարանը, Միկիս Թեոդորակիս՝ «Միրտակի», Զ. Փալիաշվիլի՝ «Ցանգալա դա գոգոնա» «Վերջալույս» օպերայից, Վ. Դոլիձե՝ «Վրացական» պար, Միկոյի ու Սաքոյի քառատողերը «Քեթո և Կոտե» օպերայից, Ս. Յինցաձե՝ կվարտետային մինիատյուրա՝ «Սոփլուրի ցեկվա»/«Մծղեմսուրի»/«Ցոլի գամիդիդգուլդա», Գ. Ցարաձե՝ «Օգդախութսա դեկեմբերսա» «Վերա թաղամասի մեղեդիները» կինոնկարից, Ի.Ս. Բախ՝ Մենուետ ու մինոր «Աննա Մագդալինայի տետրից», Վ.Ա. Մոցարտ՝ «Գիշերային փոքր սերենադա», I մաս, Լ. Բեթհովեն՝ «Էլիզայի համար», դաշնամուրային մինիատյուրա, Ֆ. Շուբերտ՝ «Բշխան ձուկ» երգը, Է. Գրիգ՝ «Անիտրայի պարը» «Պեր-Գյունտ» շարանվագից, Ռ. Շուման՝ «Քաջ ձիավորը», Բ. Բրամս՝ «Հունգարերեն պար» # 5, Կ. Սեն-Սանս՝ «Ակվարիում» «Կենդանիների դիմակահանդեսը» ցիկլից, Պ. Չայկովսկի՝ «Ծաղիկների վալսը», «Տրեպակ», «Նեսպոլական երգը» շշակի մենանվագով «Մարդուկ-Չարդուկ» բալետից, Ս. Պրոկոֆև՝ գավոտ «Դասական սիմֆոնիայից», III մաս, Կ. Ջոպլին՝ "Maple leaf rag", Ռ. Ռոջերս՝ «Երաժշտության հնչյունները» սյուիթիլը և այլն:

**III դասարան
Երաժշտություն**

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ. III.1. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործածել դրանք ռիթմիկ-հնչերանգային վարժությունների մեջ:</p>	<p>Երաժշտ. III.7. Աշակերտը կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել լսած երաժշտական ստեղծագործության նկատմամբ:</p>	<p>Երաժշտ. III.12. Աշակերտը կարող է տարբերել արվեստի բնագավառներն ու արվեստի հետ կապված մասնագիտությունները:</p>
<p>Երաժշտ. III.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:</p>	<p>Երաժշտ. III.8. Աշակերտը կարող է գործածել սովորած երաժշտական տերմինները:</p>	<p>Երաժշտ. III.13. Աշակերտը կարող է լսած ստեղծագործությունը կապել առօրյայի հետ:</p>

<p>Երաժշտ.Յ.3. Աշակերտը կարող է դիմել արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն հաղորդելու համար:</p>	<p>Երաժշտ.Յ.9. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:</p>	<p>Երաժշտ.Յ.14. Աշակերտը կարող է տարբերել սովորած երաժշտական գործիքները:</p>
<p>Երաժշտ.Յ.4. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական գրերի սովորած նշանները:</p>	<p>Երաժշտ.Յ.10. Աշակերտն ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին հարգանքով վերաբերվելու կարողություն ունի:</p>	
<p>Երաժշտ.Յ.5. Աշակերտը կարող է կազմակերպել իր ուսումնական գործունեությունը:</p>	<p>Երաժշտ.Յ.11. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը զգացմունքներ ու տրամադրություն արտահայտելու միջոց է:</p>	
<p>Երաժշտ.Յ.6. Աշակերտը կարող է աշխատել խմբում:</p>		

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ

Երաժշտ.Յ.1. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործածել դրանք **ռիթմիկ-հնչերանգային վարժությունների մեջ:**

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երգելիս, երաժշտական գործիք նվագելիս՝ տարբերում է երաժշտական հնչյունի տևողությունը:
- Երաժշտական հատվածներ լսելիս՝ տարբերում է դանդաղ և արագ կատարումները, բարձր ու ցածր ձայնը:
- Տարբեր բարձրությամբ հնչեցրած երաժշտական արտահայտություն լսելիս (*բարձր-ցածր*) տարբերում է ռեգիստրները:
- Պարի, շարժման միջոցով (*վալս, պոլկա*) տարբերում է երկչափ և եռաչափ մետրը:
- Երգելիս, երաժշտություն լսելիս՝ շեշտերով առանձնացնում է տակտի ուժեղ պահը:
- Երաժշտության ռիթմն արտահայտում է ոտքը խփելով, ծափահարելով:
- Համադասարանցիների հետ հետևում է երաժշտությանը, խաղալու գործիքներից և առօրյա գործածության առարկաներից կազմված «համույթում», «նվագախմբում» տարբեր ռիթմիկ գծագրեր է «նվագում»:

Երաժշտ.Յ.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երգելով կրկնում է երաժշտական արտահայտությունները, մեղեդիները:
- Համադասարանցիների հետ, ուսուցչի օգնությամբ կատարում է հանրաճանաչ մեղեդիներ, միաձայն ու պարզ երկձայն երգեր:
- Ներհյուսված բասի ֆոնում կատարում է բազմաձայն երգի մեկ ձայնը:
- Պարզ երգեր է կատարում այն օտար լեզվով, որը սովորում է:
- Ճիշտ է արձագանքում դիրիժորային ժեստերին (*ցածրաձայն, բարձրաձայն, դանդաղ, արագ, միասին, սկզբից*):

Երաժշտ. III.3. Աշակերտը կարող է դիմել արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն հաղորդելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ձայնի, շարժման, պարի, դիմախաղի, ձեռնածության, խաղի միջոցով արտահայտում է այս կամ այն տրամադրությունը:
- Գործիքի հետ շփվելու, աղմուկի, ծափահարության, նկարի միջոցով արտահայտում է նույն տրամադրությունը:
- Երաժշտական ստեղծագործությունից ստացած տրամադրությունը փոխանցելու համար, ուրիշների հետ միասին որևէ դեպք է բեմականացնում:
- Պարզ էտյուդներ է բեմականացնում՝ ավելացնելով համապատասխան հանպատրաստից տեքստը:
- Մարմնի շարժումով փոխանցում է երաժշտությունից առաջացած հուզմունքը:

Երաժշտ. III.4. Աշակերտը կարող է ճանաչել երաժշտական գրերի սովորած նշանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում և նկարում է ջութակի բանալին:
- Տարբերում և անվանում է նոտաների համակարգի տողերը:
- Հինգ տողանի նոտաների համակարգում ճանաչում է, անվանում և գրանցում է նոտաները:

Երաժշտ. III.5. Աշակերտը կարող է կազմակերպել սեփական ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բերում է դասի համար անհրաժեշտ իրերը:
- Ակտիվորեն ընդգրկված է դասի ընթացքում:
- Մասնակցում է հարցմանը:
- Հարցեր է տալիս:
- Գրանցում է առաջադրանքը:

Երաժշտ. III.6. Աշակերտը կարող է աշխատել խմբում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Աշխատում է ուրիշների հետ:
- Օգնում է համադասարանցիներին:
- Լսում է տարբեր կարծիքները:
- Պատրաստվում է խմբային ներկայացման համար:

Երաժշտ. III.7. Աշակերտը կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել լսած երաժշտական ստեղծագործության նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում և անվանում է ծանոթ մեղեդին/երաժշտական թեման:
- Լսելիս ծափահարությամբ, երգեցողությամբ, շարժմամբ, պարով հետևում է երաժշտությանը:
- Կոնկրետ երաժշտական հատվածը բնութագրում է ըստ մեղեդու, տեմպի, ձայնային հզորության, մետրի:
- Տարբերում է ձայնային և գործիքային ստեղծագործությունները:
- Կրկնում է երաժշտական դարձվածքը, մեղեդին, բնորոշ ռիթմիկ գծագիրը:
- Լսելիս «դիրիժորություն է» անում:
- Երաժշտությունից առաջացած տրամադրությունը, հուզմունքը փոխանցում է նկարով:

Երաժշտ. III.8. Աշակերտը կարող է գործածել սովորած երաժշտական տերմինները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սովորած տերմինները գործածում է խոսելիս և, անհրաժեշտության դեպքում, պարզաբանում է դրանք:
- Նոր տերմինի, բառի նշանակությունը ճշտելու նպատակով՝ հարցեր է տալիս:

Երաժշտ. III.9. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանի միջոցառումներին:
- Մասնակցում է և ներկա է գտնվում դպրոցի հաշվետվական համերգին:
- Թատրոն, համերգ, թանգարան է հաճախում:

Երաժշտ. III.10. Աշակերտն ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին հարգանքով վերաբերվելու կարողություն ունի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դրական է գնահատում համադասարանցիների դրսևորած ցանկացած կարողությունը՝ երգ, պար, նկարչություն, ռիթմի զգացողություն, գրելու կարողություն:
- Սպասում է մինչև ուրիշներն ավարտեն իրենց պատասխանը:
- Կոռեկտ է միտքն արտահայտելու ժամանակ:

Երաժշտ. III.11. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը զգացմունքներ ու տրամադրություն արտահայտելու միջոց է:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է այն մասին, թե ինչ տրամադրություն է փոխանցում այս կամ այն երաժշտական ստեղծագործությունը:
- Երաժշտական գործիքի տեմբրը կապում է կոնկրետ տրամադրության հետ:

- Տրամադրությանը համապատասխան՝ կատարում է ծանոթ մեղեդին, երգը:
- Խոսում է այն մասին, թե ինչ էր ցանկանում արտահայտել հեղինակը կոնկրետ ստեղծագործության մեջ:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ. III.12. Աշակերտը կարող է տարբերել արվեստի բնագավառներն ու արվեստի հետ կապված մասնագիտությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է արվեստի ամենատարբեր բնագավառները՝ երաժշտությունը, նկարչությունը, քանդակագործությունը, պարը, պոեզիան:
- Համապատասխան մասնագիտությունները կապում է մշակույթի բնագավառների հետ և նկարագրում է դրանց գործունեությունը (*օրինակ, երաժշտություն՝ կոմպոզիտոր՝ երաժշտություն է գրում*):
- Անվանում է մշակույթի այս կամ այն բնագավառի երկու կամ ավելի նմուշները և այդ բնագավառն արտահայտող միջոցները, նյութը:

Երաժշտ. III.13. Աշակերտը կարող է լսած ստեղծագործությունը կապել առօրյայի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Լսած ստեղծագործության հետ կապված հարցեր է տալիս:
- Զուգահեռներ է անցկացնում լսած և կարդացած, տեսած ստեղծագործությունների միջև:
- Երաժշտական ստեղծագործությունների սյուժեն, տեքստը կապում է ամենօրյա իրադարձությունների հետ (*ճանապարհորդություն, խաղ, եղանակ...*):

Երաժշտ. III.14. Աշակերտը կարող է տարբերել սովորած երաժշտական գործիքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մենանվագի ժամանակ ճանաչում է երաժշտական գործիքները:
- Երաժշտական գործիքները տարբերում է ըստ նյութի:
- Նկարում է գործիքը կամ դրա որևէ մասը:

Ծրագրի բովանդակությունը

Ռիթմիկ-հնչերանգային վարժություններ.

- Երաժշտական լեզվի տարբեր. մեղեդի (դիատոնիկ, 4-8 տակտ), ռիթմ (ամբողջ, կես, քառորդ, մեկ ութերորդ տևողություններ, ընդմիջում), դինամիկ մանրամասնություններ (Forte, Piano, Crescendo, Diminuendo), տեմպ (Allegro, Adagio, Presto, Moderato), մետր (երկչափ, եռաչափ), բարեհունչ, ոչ բարեհունչ հնչեղություն:

Երգեցողություն.

- Երգել նվագակցությամբ:

- Միաձայն ու պարզ երկձայն երգեր, մանկական, ժողովրդական երգեր, մեղեդիներ հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, «Ցանգալա դա գոգոնա», «Մուսի մուխասա», «Մոխեվիս քալո Թինատ», «Վիսիա, վիսիա քալի լամազի», Ջ. Կախիձե, Վ. Կախիձե՝ «Ալիլո», Վ. Գոկիելի՝ «Ծիթելքուդաս սիմդերա» («Կարմիր գլխարկի երգը»), Գ. Ցաբաձե՝ «Սաաթի» («Ժամ»), Մ. Դավիթաշվիլի՝ «Պատարա գուգուլի» («Փոքր կկուն»), Գ. Հուսեին՝ "Cüceღerim" ("«Ջուջալարիմ»), Վ. Շայինսկի՝ «От улыбки», Լ. Բեկման՝ «В лесу родилась ёлочка», Ռ. Ռոջերս՝ The Lonely Goatherd, Շոտլանդական երգ՝ «My Bonnie» և այլն:

Տրամադրության փոխանցում.

- Չայնով, շարժումով, դիմախաղով, ժեստով, պարով, խաղով:
- Էտյուդներ կատարել:

Երաժշտական գրեր.

- Ջութակի բանալի:
- Երաժշտական նշաններ հինգ տողանի համակարգում:
- Ամբողջ, կես, քառորդ տևողության նոտաներ:

Երաժշտական տերմիններ.

- Մեղեդի, ռիթմ, տևողություն, ընդմիջում, ռիթմ, տեմպ, տեմբր:
- Տեմպեր. Allegro՝ արագ, Adagio՝ դանդաղ, Presto՝ շատ արագ, Moderato՝ չափավոր:
- Դինամիկ մանրամասնություններ. Forte՝ բարձրաձայն, Piano՝ ցածրաձայն, crescendo՝ ձայնի ուժեղացում, diminuendo՝ ձայնի թուլացում:
- Կոմպոզիտոր, ժողովրդական բանահյուսություն, պիես, համերգ, փորձ, նվագախումբ, դիրիժոր, մենակատար, նվագակցում, բալետ, օպերա, թատերական/օպերային/բալետի խումբ, գործողություն/ակտ, ընդմիջում (անտրակտ), մեներգ, համույթ, զուգերգ:
- Սովորած երաժշտական գործիքների անվանումները:

Աշխատանքային ձևեր.

- Խմբային, զույգերով, անհատական:

Միջոցառումներ.

- Դասարանի հանդեսը:
- Դպրոցի հաշվետվական համերգը:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում.

- Ուսումնասիրված ու լսած ստեղծագործության վերաբերյալ տեղեկատվություն. ստեղծման պատմությունը, պյուժեն, հեղինակը:
- Տրամադրության ընկալում, զրույց տպավորությունների մասին:
- Արվեստի բնագավառների հետ ծանոթանալը. երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, պոեզիա, գրականություն... Այդ բնագավառները կապել կոնկրետ մասնագիտությունների, մարդկանց հետ:

Երաժշտական գործիքներ.

- Ժողովրդական և դասական գործիքները ճանաչելը դրանց ձևի և ձայնի միջոցով, օրինակ. ճիբոնի, չանգ, դափ, հոբոյ, զանգեր, կոնտրաբաս, եռանկյունի:

Հանձնարարված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր, հատվածներ վրաց և արտասահմանյան ստեղծագործություններից, մանկական երաժշտական ծրագրային պիեսներ, հատվածներ հայտնի երաժշտական ստեղծագործություններից, օրինակ, *չոնգուրով (քառալար) նվագելու*, «Վրացական մրավալժամիերի», «Թեբրոնե միդիս ծղալզեդա», «Մորբիս Արագվի», «Ղմերթի Ուփալի» («Աստված Տեր») տաղարանը, Ջ. Փալիաշվիլի՝ Կիագոյի տեսարանն ու ժողովրդին կոչելը «Ազատության» «Վերջալույս» օպերայից, «Վրացական» պար «Աբեսալոմ և Էթերի» օպերայից, Դ. Արաղիշվիլի՝ Արդուլ արաբի արիոզոն, զուգերգ Ռուսուդանի հետ և պարեր «Ասք Շոթա Ռուսթավելու մասին» օպերայից, Աբխազերեն երգ՝ «Սալուման Ախաձա» («Նանինա» համույթի կատարմամբ), Ն. Սուլխանիշվիլի՝ «Մեսուփրուլի», Ջ. Կախիձե՝ «Իավնանա» (օրորոցային) «Ինչ է ստեղծել իավնանան» կինոֆիլմից, Ի.Ս. Բախ՝ Բրանդենբուրգի համերգը #2, III մաս՝ բլոկֆլեյտա, հոբոյ, Դ. Սկարլատ՝ Սոնատ, K. 159, դո մաժոր, Ա. Վիվալդի՝ «Գարուն», I մաս, «Տարվա եղանակները» համերգաշարից, Վ.Ա. Սոցարտ՝ նախերգանք «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայի համար, Լ. Բեթհովեն՝ դաշնամուրային համերգ, #1, III մաս, Է. Գրիգ՝ «Առավոտը» «Պեր-Գյունտ» մինիատյուրից, Կ. Դեբյուսի՝ «Տիկնիկների կեկ-ուոկը», Բ. Շտրաուս՝ «Ռադեցկի երթը» և այլն:

IV դասարան
Երաժշտություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ.IV.1. Աշակերտը կարող է երաժշտական լեզվի սովորած տարրերը գործածել հանպատրաստից վարժություններում:</p>	<p>Երաժշտ.IV.7. Աշակերտը կարող է խոսել լսած երաժշտական ստեղծագործության մասին:</p>	<p>Երաժշտ.IV.11. Աշակերտը կարող է տարբերել երաժիշտների մասնագիտություններն ու համեմատել դրանք:</p>
<p>Երաժշտ.IV.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:</p>	<p>Երաժշտ.IV.8. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:</p>	<p>Երաժշտ.IV.12. Աշակերտը կարող է քննարկել լսած երաժշտական</p>

<p>Երաժշտ. IV.3. Աշակերտը կարող է սահմանել ու հաղորդել իրեն հետաքրքրող տրամադրությունը, սյուժեն, թեման:</p> <p>Երաժշտ. IV.4. Աշակերտը կարող է ճանաչել ու գրանցել երաժշտական գրերի սովորած նշանները:</p> <p>Երաժշտ. IV.5. Աշակերտը կարող է կազմակերպել սեփական ուսումնական գործունեությունը:</p> <p>Երաժշտ. IV.6. Աշակերտը կարող է աշխատել խմբում:</p>	<p>Երաժշտ. IV.9. Աշակերտը կարող է պահպանել վարվելակարգի նորմերը՝ մշակութային միջոցառումներին ներկա գտնվելիս:</p> <p>Երաժշտ. IV.10. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը/արվեստը ինքնարտահայտման միջոց է:</p>	<p>ստեղծագործությունները:</p> <p>Երաժշտ. IV.13. Աշակերտը կարող է իրարից տարբերել երաժշտական գործիքները:</p>
---	---	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ. IV.1. Աշակերտը կարող է երաժշտական լեզվի սովորած տարրերը գործածել հանպատրաստից վարժություններում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երաժշտություն լսելիս՝ տարբերում է մաժորն ու մինորը:
- Երգում է տոնիկի շուրջ ամենամոտ հնչյունները (*տոնիկ հնչյուններ երգել*):
- Երգելով՝ կրկնում է ինտերվալները կվինտայի սահմաններում:
- Ծանոթ մեղեդու համար տեքստ է ընտրում:
- Ծանոթ մեղեդին երգում է դանդաղ-արագ (*տեմպ*), բարձրաձայն-ցածրաձայն (*ձայնային հզորություն*):
- Որոշում է, թե դաշնամուրի որ ռեգիստրում է հնչում երաժշտական հատվածը:
- Ճանաչում է գործիքով, ցածրաձայն, այլ տեքստով կատարված ծանոթ մեղեդին:
- Երգ կատարելիս/երաժշտություն լսելիս՝ շեշտերով առանձնացնում է ուժեղ պահը:
- Անփոփոխ մետրի պայմաններում, ծափահարությամբ կամ թակոցով, տարբեր ռիթմիկ գծագրեր է ներկայացնում:
- Համադասարանցիների կողմից ներհյուսված հնչող տոնը, պարզ ռիթմիկ պատկերը (*օստինատո*) համակցում է սեփական կամ այլ ձայնի հետ (*թակոց, երաժշտ. գործիք*) երաժշտական դարձվածքի, ռիթմիկ պատկերի հետ:

- Համադասարանցիների հետ, խաղալու գործիքներից և առօրյա գործածության առարկաներից կազմված «համույթում», «նվագախմբում» տարբեր ռիթմիկ գծագրեր է «նվագում»:

Երաժշտ. IV.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մածոթ և մինոթ է երգում համադասարանցիների հետ:
- Համադասարանցիների հետ ինտերվալներ է երգում կվինտայի սահմաններում:
- Մենակ, զույգի, խմբի հետ միասին միաձայն ու երկձայն երգեր է երգում ժողովրդական և դասական երգացանկից:
- Երգում է այն օտար լեզվով, որը սովորում է:
- Երգում է պահպանելով դինամիկ մանրամասնությունները:

Երաժշտ. IV.3. Աշակերտը կարող է սահմանել ու հաղորդել իրեն հետաքրքրող տրամադրությունը, սյուժեն, թեման:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշների հետ պարզ տեսարաններ է բեմականացնում՝ կոնկրետ երաժշտական ստեղծագործության/հատվածի տրամադրությունը հաղորդելու նպատակով:
- Որոշակի տրամադրություն է արտահայտում մնջախաղով:
- Հասկանում է համադասարանցու կողմից արտահայտված տրամադրությունը:
- Լսած երաժշտական ստեղծագործության տպավորություններով տեքստ է հորինում:
- Կերպարի բնավորությանը երաժշտական հատված է համապատասխանեցնում:
- Կոնկրետ լուրը, սյուժեն համապատասխանեցնում է ծանոթ երաժշտական ստեղծագործությանը:

Երաժշտ. IV.4. Աշակերտը կարող է ճանաչել ու գրանցել երաժշտական գրերի սովորած նշանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում և գրում է նոտաները հինգ տողանի երաժշտական համակարգում:
- Տարբերում և գրանցում է տևողությունները, ընդմիջումները (*ամբողջ, կես, քառորդ, մեկ ութերորդ*):
- Ստեղնաշարի վրա անվանում է սովորած օկտավները:
- Կարդում է և պարզ ռիթմ է արտահայտում ծափահարությամբ:

Երաժշտ. IV.5. Աշակերտը կարող է կազմակերպել իր ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում և բերում է ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ իրերը:
- Գրանցում է առաջադրանքը:
- Ակտիվորեն ընդգրկված է դասի ընթացքում:
- Մասնակցում է հարցմանը:
- Հարցեր է տալիս:
- Կոնկրետ խնդրին համապատասխան՝ ծրագրում է կատարվելիք աշխատանքի հաջորդականությունը:

Երաժշտ. IV.6. Աշակերտը կարող է աշխատել խմբում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Փորձում է գույզի հետ միասին լուծել խնդիրը:
- Աշխատում է անհատականորեն և ուրիշների հետ միասին:
- Լսում է տարբեր կարծիքները:
- Մասնակցում է խմբային աշխատանքին:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Երաժշտ. IV.7. Աշակերտը կարող է խոսել լսած երաժշտական ստեղծագործության մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր առաջադրանքներ է կատարում երաժշտություն լսելիս՝ մատնանշում է ծանոթ երաժշտական գործիքի, վոկալի մուտքը:
- Ճանաչում է վաղուց լսած ստեղծագործությունների հատվածները:
- Տարբերում է ձայնային և գործիքային տեմբրը:
- Կոնկրետ երաժշտական հատվածը նկարագրում է ըստ տեմպի, ձայնային հզորության, մետրի, երաժշտական գործիքների տեմբրի:
- Բնութագրում է կատարողների կազմն ընդհանուր առմամբ:
- Խոսելիս գործածում է սովորած տերմինները:

Երաժշտ. IV.8. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանի համերգին, դիմակահանդեսին, պարահանդեսին:
- Մասնակցում և ներկա է գտնվում դպրոցի հաշվետվական համերգին:
- Մասնակցում է վիկտորինային:
- Լսարանի առջև ներկայանում է կատարողի, ստեղծագործողի կամ համերգավարի դերում:

Երաժշտ. IV.9. Աշակերտը կարող է պահպանել վարվելակարգի նորմերը՝ մշակութային միջոցառումներին ներկա գտնվելիս:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Չի խանգարում ներկայացման, համերգի, կինոֆիլմի ընթացքին:
- Նախապես համաձայնեցված օրենքների համաձայն՝ ստեղծագործության ավարտից հետո, արտահայտում է իր վերաբերմունքը:
- Ցուցահանդեսին, թանգարանում վարվում է նախապես համաձայնեցված օրենքների համաձայն:
- Քննարկման ժամանակ, սպասում է, մինչև ուրիշներն արտահայտեն իրենց մտքերը:

Երաժշտ. IV.10. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը/արվեստը ինքնարտահայտման միջոց է:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է այն մասին, թե ինչ տրամադրություն է հաղորդում այս կամ այն երաժշտական ստեղծագործությունը:

- Լսած երաժշտական ստեղծագործության համար ընտրում է մի քանի առաջարկված վերնագրերից մեկը:
- Խոսում է երաժշտական ստեղծագործությունը լսելու հետևանքով առաջացած տպավորությունների և այն գույգորդությունների մասին, որոնք առաջանում են այդ ստեղծագործությունից:
- Քննարկում է, թե ինչ է հնարավոր արտահայտել մեղեդու, տարբեր արտահայտչական եղանակների միջոցով:
- Թվարկում է մի քանի պատճառ, ինչի համար մարդիկ արվեստի ստեղծագործություններ են ստեղծում:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ.IV.11. Աշակերտը կարող է տարբերել երաժիշտների մասնագիտություններն ու համեմատել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է կոմպոզիտորի և կատարողի մասնագիտությունները:
- Անվանում է կոմպոզիտորի, դաշնակահարի, ջութակահարի, դիրիժորի, երգչի և այլ մասնագիտությունները:
- Մտաբերում է, թե ինչ մասնագիտություն ունեցող երաժիշտի է տեսել ու լսել:

Երաժշտ.IV.12. Աշակերտը կարող է քննարկել լսած երաժշտական ստեղծագործությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Լսած ստեղծագործությունները բնութագրում է ըստ տրամադրության:
- Տարբերում է բազմապիսի ներկայացումները (*բալետային, օպերային, դրամատիկական*):
- Տարբերում է դասական, ժողովրդական և ժամանակակից երաժշտական ստեղծագործությունները:
- Ստեղծագործության բովանդակության, հեղինակի, ժանրի հետ կապված հարցեր է տալիս և պատասխանում է հարցերին:

Երաժշտ.IV.13. Աշակերտը կարող է իրարից տարբերել երաժշտական գործիքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժողովրդական երաժշտական նվագարանները տարբերում է դասական երաժշտության գործիքներից:
- Նկարում է գործիքները:
- Մենանվագի կամ համատեղ հնչեղության ժամանակ, ճանաչում է երաժշտական գործիքները:
- Առանձնացնում և անվանում է երաժշտական գործիքի առանձին մասերը (*աղեղ, ստեղն...*):
- Հիմնավորում է իր վերաբերմունքն այն գործիքի նկատմամբ, որն առանձնացրել է մնացած գործիքներից (*դուր է գալիս դրանով նվագելու եղանակը, տեմբրը, ձևը...*):

Ծրագրի բովանդակությունը

Հանպատրաստից վարժություններ.

- Երաժշտական լեզվի տարրերի, երաժշտական գործիքների գործածությամբ:
- Հնչյուն, ձայնային հզորություն, ռիթմ (օստինատո), տեմպ, մետր, ռեգիստր (բարձր-միջին-ցածր), տեմբր (գործիքային, ձայնային), եղանակ (մաժոր, մինոր), ինտերվալները կվինտայի սահմաններում, բարեհունչ, ոչ բարեհունչ հնչեղություն, բաղաձայնություն:

Երգեցողություն.

- Նվագակցությամբ և առանց դրա:
- Անհատական և խմբային:
- Միաձայն ու պարզ երկձայն երգեր՝ մանկական, ժողովրդական երգացանկից, մեղեդիներ՝ հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, «Թերրոնե միդիս ծղալզեդա», «Մորբիս Արագվի», «Նանա», «Գոգով, գոգով, շալթվալա», Ա. Կերեսելիձե՝ «Ծվիմա» («Անձրև»), Բ. Գուրգուլիա՝ «Իավնանա», Գ. Յաբաձե՝ «Օգդախութսա դեկեմբերսա», Ս. Ցինցաձե՝ «Միմդերա շավ կատազե» («Երգ սև կատվի մասին»), Վ. Կախիձե՝ «Անո և Վանո», Մ. Արոշիձե՝ «Թու, թու, թու», Գ. Գորդեզիանի՝ «Ըա դիլա թենդերա», Լ. Բեթհովեն՝ «Ձոն ուրախության» 9-րդ սիմֆոնիայի ավարտի թեման, Վ. Շայինսկի՝ "Песенка крокодила Гены", Ջ. Լենոն, Պ. Մակարտնի՝ "Ob-La-Di, Ob-La-Da", Մ. Գորդոն – Հ. Վորեն՝ Chattanooga Choo-Choo" և այլն:

Տրամադրության փոխանցում.

- Մնջախաղ:
- Կոմպոզիցիա (տեսարանների բեմադրում):

Երաժշտական գրեր.

- Նոտաների ճանաչելն ու գրանցելը հինգ տողանի երաժշտական համակարգում, ջութակի բանալիների մեջ:
- Ամբողջ, կես, քառորդ, մեկ ութերորդ տևողությամբ նոտաների և ընդմիջումների կարդալն ու գրանցումը, պարզ ռիթմիկ գծագրի արտահայտումը ծափահարությամբ:

Երաժշտական տերմիններ.

- Մեղեդի, ռիթմ, տևողություն, ընդմիջում, ռիթմ, տեմպ, տեմբր, եղանակ (մաժոր, մինոր), տոնիկ:
- Տեմպեր. Allegro՝ արագ, Adagio՝ դանդաղ, Presto՝ շատ արագ, Moderato՝ չափավոր:
- Դինամիկ մանրամասնություններ. Mezzo Forte, Mezzo Piano:
- Կատարման եղանակներ. ստակատո, լեգատո:
- Կոմպոզիտոր, ժողովրդական բանահյուսություն, պիես, համերգ, փորձ, նվագախումբ, դիրիժոր, մենակատար, նվագակցում, բալետ, օպերա, թատերական/օպերային/բալետի խումբ, ընդմիջում (անտրակտ), մեներգ, արիոզո, համույթ, զուգերգ, եռյակ, կվարտետ:
- Սովորած երաժշտական գործիքների անվանումները:

Աշխատանքային ձևեր.

- Անհատական, գույգերով, խմբային:

Միջոցառումներ.

- Դպրոցի հաշվետվական համերգը:
- Դասարանի համերգը:
- Վիկտորինա:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում.

- Տեղեկատվություն. ստեղծման պատմությունը, սյուժեն, հեղինակը:
- Հասկանալ տրամադրությունը, խոսել տպավորությունների մասին:
- Հասկանալ երաժիշտների մասնագիտությունները. կոմպոզիտոր, երգիչ, դիրիժոր, դաշնակահար, ջութակահար, թավջութակահար, ալտիսո և դրանք առնչել կոնկրետ մարդկանց հետ:

Երաժշտական գործիքներ.

- Ճանաչել ձևով և հնչեղությամբ:
- Ժողովրդական ու դասական գործիքներ, օրինակ, ձիանուր, քնար, դուդուկ, կլարնետ, ֆագոտ, շշակ, կլավիկորդ:

Երաշխավորված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր: Հատվածներ Բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի, XX դարի երգարվեստի նմուշներից, վրաց կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, «Իմերուլի մզգավրուլի» («Իմերական ճամփորդական»), «Արամի դո շարիքա», մեզրելերեն «Ալիլո», «Ասլանուրի մրավալժամիերի», փանդուրով նվագելու, «Ջվարսա շենսա» տաղարանը, Օ. դի Կապուա՝ նեապոլական երգ "O Sole mio", հայկական «Բախտավար» պար, Զ. Փալիաշվիլի՝ հատվածներ «Վերջալույս» օպերայից, Մ. Բալանչիվաձե՝ ծաղրածուի քառատողերը «Նենգ Դարեջանը» օպերայից, Օ. Թաքթաքիշվիլի՝ «Յումորեսկա» կամերային նվագախմբի համար, Ն. Գաբունիա՝ պիեսներ «Աշակերտի օրագիրը» դաշնամուրային ցիկլից, Դ. Տուրիաշվիլի՝ «Պեպի երկար գուլպան» մյուզիքլը, Ֆ. Կուպերեն՝ «Տամբուրինի»/«Օլվոնց»/«Բամբասող», Բ. Հայդն՝ սիմֆոնիա #103, I մաս, Վ.Ա. Մոցարտ՝ «Թուրքական երթ», #11 դաշնամուրային սոնատից, III մաս, Լ. Բեթհովեն՝ նախերգանք Վ. Գյոթեի «Էգմոնտ» դրամայի համար, Ֆ. Շուբերտ՝ «Ցայգերգ», Ֆ. Շոպեն՝ պոլոնեզ (լեհերեն) #3, լա մաժոր, Պ. Չայկովսկի՝ հատվածներ «Մարդուկ-Ջարդուկ» բալետից, Ս. Պրոկոֆև՝ «Գավոտ», պատմ. 25, Գ. Միլեր՝ հատվածներ «Արևային դաշտի ցայգերգը» մյուզիքլից և այլն:

**V դասարան
Երաժշտություն**

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ.V.1. Աշակերտը կարող է երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործիքները գործածել հանպատրաստից վարժություններում:</p> <p>Երաժշտ.V.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:</p> <p>Երաժշտ.V.3. Աշակերտը կարող է սահմանել ու հաղորդել իրեն հետաքրքրող տրամադրությունը, սյուժեն, թեման:</p> <p>Երաժշտ.V.4. Աշակերտը կարող է կարդալ և արտագրել պարզ ռիթմիկ գծագիրը, մեղեդին:</p> <p>Երաժշտ.V.5. Աշակերտը կարող է կազմակերպել սեփական ուսումնական գործունեությունը:</p> <p>Երաժշտ.V.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ:</p>	<p>Երաժշտ.V.7. Աշակերտը կարող է քննարկել լսած երաժշտական ստեղծագործությունը:</p> <p>Երաժշտ.V.8. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:</p> <p>Երաժշտ.V.9. Աշակերտը կարող է պահպանել վարքագծի նորմերը՝ մշակութային միջոցառումներին ներկա գտնվելիս:</p> <p>Երաժշտ.V.10. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը/արվեստը մշակութային ինքնարտահայտման միջոց է:</p>	<p>Երաժշտ.V.11. Աշակերտը կարող է քննարկել արվեստի բնագավառներն ու դրանց առնչությունները համադրական արվեստում:</p> <p>Երաժշտ.V.12. Աշակերտը կարող է քննարկել լսած երաժշտական ստեղծագործությունները:</p> <p>Երաժշտ.V.13. Աշակերտը կարող է տարբերել ու խմբավորել երաժշտական գործիքները:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Երաժշտ.V.1. Աշակերտը կարող է երաժշտական լեզվի սովորած տարրերն ու գործիքները գործածել հանպատրաստից վարժություններում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է մաժորն ու մինորը:
- Երգում է մաժորային ու մինորային եռաձայնությունը:
- Երգով ավարտում է ուսուցչի կամ համադասարանցու կողմից սկսած մեղեդին, պատասխանում է երաժշտական արտահայտությանը:
- Երգով կրկնում է ինտերվալներն օկտավի սահմաններում:
- Փոխում է ծանոթ երգի տեքստը:
- Ծանոթ մեղեդին երգում է տարբեր տոներով (*տարբեր բարձրությամբ*):
- Ճանաչում է ցածրաձայն, այլ տեքստով, գործիքով կատարված ծանոթ մեղեդին:
- Երաժշտություն լսելիս՝ տարբերում է երկչափ և եռաչափ մետրը:
- Անփոփոխ մետրի պայմաններում, ծափահարությամբ կամ թակոցով ներկայացնում է տարբեր ռիթմիկ գծագրեր:
- Համադասարանցիների կողմից ներհյուսված հնչող տոնը (*օստինատո*), պարզ ռիթմիկ պատկերը համակցում է սեփական կամ այլ (*երաժշտ. գործիք, թակոց և այլն*) ձայնի հետ, երաժշտական դարձվածքի, ռիթմիկ պատկերի հետ:
- Համադասարանցիների հետ, խաղալու գործիքներից և առօրա գործածության առարկաներից կազմված «համույթում», «նվագախմբում» տարբեր ռիթմիկ գծագրեր է նվագում:

Երաժշտ.V.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մաժոր և մինոր է երգում համադասարանցիների հետ:
- Համադասարանցիների հետ ինտերվալներ է երգում օկտավի սահմաններում:
- Մենակ, զույգի, խմբի հետ միասին միաձայն ու երկձայն երգեր է երգում ժողովրդական և դասական երգացանկից:
- Կատարում է կանոնի տիպի վարժություններ:
- Երգում է՝ պահպանելով դինամիկ մանրամասները:

Երաժշտ.V.3. Աշակերտը կարող է սահմանել ու հաղորդել իրեն հետաքրքրող տրամադրությունը, սյուժեն, թեման:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշների հետ պարզ տեսարաններ է բեմականացնում՝ կոնկրետ երաժշտական ստեղծագործության/հատվածի տրամադրությունը հաղորդելու նպատակով:
- Որոշակի տրամադրություն է արտահայտում մնջախաղով:
- Լսում է համադասարանցիների հայտնած կարծիքը սեփական կատարման վերաբերյալ:
- Գնահատում է համադասարանցիների կողմից կատարված թատերական էլյուզը:
- Կերպարի բնավորությանը երաժշտական հատված է համապատասխանեցնում:
- Կոնկրետ լուրը, սյուժեն համապատասխանեցնում է ծանոթ երաժշտական ստեղծագործությանը և, հնարավորության սահմաններում, բեմականացնում է այն:

Երաժշտ. V.4. Աշակերտը կարող է կարդալ և արտագրել պարզ ռիթմիկ գծագիրը, մեղեդին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նոտաները կարդում և գրում է ջութակի, բասի բանալիների մեջ:
- Հայտնաբերում է վերափոխման նշանները:
- Անվանում է օկտավները:
- Գրում է, կարդում և ծափահարությամբ հաղորդում է ռիթմիկ գծագիրը:
- Ստեղծագործությունը սովորելիս հիմնվում է երաժշտական տեքստի վրա:

Երաժշտ. V.5. Աշակերտը կարող է կազմակերպել իր ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձին խնդիրները լուծելու համար՝ ծրագրում է աշխատանքի հերթականությունը:
- Ակտիվորեն ընդգրկված է դասի ընթացքում:
- Հարցեր է տալիս:
- Մասնակցում է հարցմանը:

Երաժշտ. V.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խնդիրը լուծելու համար՝ ուրիշների հետ աշխատում է:
- Անհրաժեշտության դեպքում, աջակցություն է խնդրում և աջակցում է ուրիշներին:
- Բաշխում է աշխատանքային գործառույթներն ու պարտականությունները:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Երաժշտ. V.7. Աշակերտը կարող է քննարկել լսած երաժշտական ստեղծագործությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է լսած ստեղծագործությունների հատվածները:
- Իր տպավորությունները հաղորդում է բառերով, նկարով:
- Բնութագրում է կատարողների կազմը:
- Լսելիս ճանաչում է ծանոթ երաժշտական ձևերը:
- Տարբերում է ձայնային և գործիքային տեմբրը:
- Կոնկրետ երաժշտական հատվածը բնութագրում է ըստ մետրի, երաժշտական գործիքների, ձայնային տեմբրի, եղանակի թեքության (*մաժոր, մինոր*):
- Խոսելիս գործածում է երաժշտական տերմինները:

Երաժշտ. V.8. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանի ներկայացմանը, դիմակահանդեսին:
- Մասնակցում և ներկա է գտնվում դպրոցի հաշվետվական համերգին:
- Ներկա է գտնվում հանդիպում-երեկոյթներին. կոմպոզիտորի, կատարողի հետ:
- Համադասարանցիների հետ միասին ներկա է գտնվում հանրային համերգին, ներկայացմանը:
- Էքսկուրսիաների է գնում՝ արվեստագետների տուն-թանգարաններ:
- Մասնակցում է վիկտորինային և ղեկավարում է այն:

- Լսարանի առջև ներկայանում է կատարողի, հեղինակի կամ համերգավարի դերում:

Երաժշտ.V.9. Աշակերտը կարող է պահպանել վարվելակարգի նորմերը՝ մշակութային միջոցառումներին ներկա գտնվելիս:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Չի խանգարում համերգի, կինոֆիլմի ընթացքին:
- Նախապես համաձայնեցված օրենքների համաձայն՝ ստեղծագործության ավարտից հետո, արտահայտում է իր վերաբերմունքը:
- Ցուցահանդեսին, թանգարանում վարվում է նախապես համաձայնեցված օրենքների համաձայն:
- Կոռեկտ է միտքն արտահայտելիս, ստեղծագործությունը քննարկելիս:
- Հանդուրժող է տարբեր դիրքորոշումների նկատմամբ:

Երաժշտ.V.10. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը/արվեստը մշակութային ինքնարտահայտման միջոց է:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատմում է, թե ինչ տեղեկատվություն է ստացել որևէ պատմական դարաշրջանի մասին՝ ծանոթանալով այդ դարաշրջանի արվեստի ստեղծագործության հետ:
- Պատմում է, թե ինչ է իմացել այս կամ այն ժողովրդի մշակույթի մասին՝ ծանոթանալով նրա երաժշտությանը:
- Խոսում է մշակույթների տարբերակիչ նշանների, յուրահատկությունների մասին:
- Վրացական երաժշտության անձանոթ նմուշները ճանաչում է ըստ ոճի:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ.V.11. Աշակերտը կարող է քննարկել արվեստի բնագավառներն ու դրանց առնչությունները համադրական արվեստում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է արվեստի համադրական բնագավառների (*կինո, թատրոն, այդ թվում՝ երաժշտական թատրոն*) բաղկացուցիչ տարրերը:
- Անվանում է արվեստի համադրական բնագավառների հետ կապված մասնագիտություններն ու դրանց ականավոր ներկայացուցիչներին:
- Տարբերում է բազմատեսակ ներկայացումները (*բալետային, օպերային, դրամատիկական*):
- Մտաբերում է սինթեզային մշակույթի այն նմուշները, որոնք տեսել է կամ որոնց ներկա է գտնվել:
- Անվանում է այն համերգային և թատերական սրահները, որտեղ ներկա է գտնվել ներկայացումների:
- Թվարկում է բարձրագույն ուսումնական հաստատությունները, որտեղ մշակույթի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ են դաստիարակվում:

Երաժշտ.V.12. Աշակերտը կարող է քննարկել լսած երաժշտական ստեղծագործությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է վրացական ժողովրդական ու մասնագիտական ստեղծագործությունները:
- Խոսում է սովորած ստեղծագործությունների հեղինակների մասին:
- Համեմատում է սովորած ստեղծագործությունների հետ կապված տեղեկատվությունները՝ ժանր, ծրագիր, ձև:
- Ժողովրդական երաժշտության հանրաճանաչ նմուշները տարբերում է ըստ ժանրերի ու Վրաստանի մարզերի:

Երաժշտ.V.13. Աշակերտը կարող է տարբերել ու խմբավորել երաժշտական գործիքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մենանվագի ժամանակ, համույթում հնչեցնելիս՝ տարբերում է երաժշտական գործիքները:
- Նկարում կամ կերտում է երաժշտական գործիքները:
- Երաժշտական գործիքները խմբավորում է հնչյունի ընդունման կարգի կամ նյութի համաձայն:

Ծրագրի բովանդակությունը

Հանապատրաստից վարժություններ.

- Երաժշտական լեզվի տարրերի, երաժշտական գործիքների գործածությամբ:
- Հնչյուն, ձայնային հզորություն, ռիթմ (*օստինատո, կետագծային ռիթմ*), տեմպ, մետր, ռեգիստր, տեմբր, եղանակ (*մաժոր, մինոր*), տոն, ինտերվալները օկտավի սահմաններում, բարեհունչ, ոչ բարեհունչ հնչեղություն (*ներդաշնակություն, աններդաշնակություն*):

Երգեցողություն.

- Նվագակցությամբ և առանց դրա:
- Անհատականորեն՝ համույթում, և խմբի հետ:
- Միաձայն ու երկձայն երգերի կատարում, օրինակ, «Չելս», «Քալսա կաբա շեուկերավս», «Ցոլի գամիդիդգուլդա», «Շավլեզո», Վ. Ծերեթելի՝ «Սուլիկո», Ռ. Լադիձե՝ «Չեմո կարգո քվեդանավ», Ն. Գաբունիա՝ «Մեորե լեզենդա» («Երկրորդ լեզենդը»), Բ. Գելովանի՝ «Օրի Ռեզո» («Երկու Ռեզո»), Բ. Գուրգուլիա՝ «Թեթրի գվիրիլա» («Սպիտակ երիցուկ»), «Օդելիա, դելա», Ֆ. Շուբերտ՝ «Կարմրախայտը», Ջ. Լենոն, Պ. Մակարտնի՝ «Yellow Submarine», Ռ. Ռոջերս՝ «Blue Moon», «Էդելվայս» («Ալպյան ձյունածաղիկ») և այլն:

Կոմպոզիցիա.

- Տրամադրության հաղորդում՝ մնջախաղ:
- Տեսարանների բեմադրում:

Երաժշտական գրեր.

- Նոտաների ճանաչելն ու գրանցելը ջութակի, բասի բանալիների մեջ՝ փոքր, առաջին, երկրորդ օկտավներով:
- Երաժշտական հատվածի արտագրություն:
- Ամբողջ, կես, քառորդ, մեկ ութերորդ տևողության նոտաներ, ընդմիջումներ:
- Երաժշտական գրառման գործածումը, ստեղծագործությունը սովորելու ժամանակ:

Երաժշտական տերմիններ.

- Մեղեդի, ռիթմ, տևողություն, ընդմիջում, ռիթմ, տեմպ, տեմբր, եղանակ (մաժոր, մինոր), տոն, տոնիկ, կայուն, տատանվող աստիճաններ:
- Դինամիկ մանրամասնություններ. Mezzo Forte, Mezzo Piano:
- Կատարման եղանակներ. ստակատո, լեգատո:
- Կոմպոզիտոր, ժողովրդական բանահյուսություն, բանահավաք, պիես, համերգ, փորձ, նվագախումբ, դիրիժոր, մենակատար, նվագակցում, բալետ, կորդե-բալետ, բալերինա, բալետի պարող, օպերա, թատերական/օպերային/բալետի խումբ, գործողություն/ակտ, ընդմիջում (անտրակտ), մեներգ, արիոզո, ռեչիտատիվ, համույթ, զուգերգ, եռյակ, կվարտետ, կվինտետ, ժանր:
- Սովորած երաժշտական գործիքների անվանումները:

Երաժշտական ձևեր.

- Ռոնդո, քառատող ձև:

Երաժշտական ստեղծագործություններ.

- Լսել, ճանաչել, համեմատել տարբեր դարաշրջանների հայտնի ստեղծագործությունները:
- Լսել, ճանաչել վրացական ժողովրդական երաժշտությունը:

Միջոցառումներ.

- Դպրոցի համերգը:
- Դասարանի ներկայացումը, դիմակահանդեսը, հանդիպում-երեկույթները:
- Վիկտորինա:
- Ներկա գտնվել հանրային համերգին, բեմադրությանը, էքսկուրսիա տուն-թանգարաններ:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում.

- Տեղեկատվություն. ստեղծման պատմությունը, սյուժեն, հեղինակի անձը:
- Հասկանալ տրամադրությունը, խոսել տպավորությունների մասին:
- Արվեստի բնագավառների առնչությունները արվեստի համադրական բնագավառներում. կինո, թատրոն... Կոնկրետ մասնագիտությունների, մարդկանց և նմուշների կապելն այդ բնագավառների հետ:
- Ստեղծագործության և հեղինակի մասին տեղեկատվություն՝ սյուժե (ծրագիր, լիբրետո), ժանր, կենսագրական տվյալներ:

Երաժշտական գործիքներ.

- Ճանաչել ձևով և հնչեղությամբ:
- Ժողովրդական ու դասական գործիքներ, օրինակ, սրինգ, սազ, տրոմբոն, օրգան, ալտ և այլն:

Երաշխավորված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր: Հատվածներ Բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի, XX դարի երգարվեստի նմուշներից, վրաց կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, *գուրիական «Խասանբեգուրա», «Դիլա» («Առավոտ»), կախեթական «Ալիլո», մեգրելական «Կիրիալեսա», քարթլ-կախեթական «Գլեսավ դա գլեսավ», «Ուփալի սուփեվս» («Տերը իշխում է») տաղարանը, ավստրիական ժողովրդական երգ, հրեական "Hava Nagilah" երգը, Ջ. Փալիաշվիլի՝ հատվածներ «Աբեսալոմ և Էթերի» օպերայից, Ա. Մաճավարիանի՝ հատվածներ «Օտելլո» բալետից, Ռ. Լադիձե՝ դաշնամուրային «Ռոնդո-տոկատա» պիեսը, Ա. Բալանչիվաձե՝ դաշնամուրային համերգ # 3, Բ. Ս. Բախ՝ Տոկատա և Ֆուգա՝ ռե մինոր երգեհոնի համար, Ժ. Փ. Ռամո՝ պիեսներ «Հավր»/«Արքայադուստրը»/«Շատախոս կինը»/«Թռչունների կանչը», Ա. Վիվալդի՝ «Ամառ», I մաս, «Տարվա եղանակները» համերգաշարից, Վ.Ա. Սոցարտ՝ սիմֆոնիա №40, I մաս, Լ. Բեթհովեն՝ դաշնամուրային սոնատ # 1, Լ. Բեկեն՝ «Կլուն», Ջ. Ռոսին՝ Տիգարոյի ու դոն Բազիլիոյի մեներգերը «Սևիլյան սափրիչը» օպերայից, Ֆ. Մենդելսոն՝ «Առանց բառերի երգեր», հարսանեկան երթ «Ամառային գիշերվա երազը» նվագախմբային նախերգանքից, Ջ. Վերդի՝ երթ «Աիդա» օպերայից, Ա. Խաչատրյան՝ «Սուսերներով պար» «Գայանե» բալետից, Ա. Ռիբնիկով՝ երաժշտություն «Բուրատինոյի արկածները» կինոֆիլմից, Ռեյ Չարլզ՝ «Ամերիկա» և այլն:*

VI դասարան

Երաժշտություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
Երաժշտ.VI.1. Աշակերտը կարող է մասնակցել հանպատրաստից վարժություններին:	Երաժշտ.VI.7. Աշակերտը կարող է քննարկել ու գնահատել լսած երաժշտական ստեղծագործությունը:	Երաժշտ.VI.10. Աշակերտը ճանաչում է վրացական և համաշխարհային երգարվեստի հայտնի նմուշներն ու դրանց ներկայացուցիչներին:

<p>Երաժշտ. VI.2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:</p> <p>Երաժշտ. VI.3. Աշակերտը կարող է սահմանել ու հաղորդել իրեն հետաքրքրող տրամադրությունը, սյուժեն, թեման:</p> <p>Երաժշտ. VI.4. Աշակերտը կարող է գործածել երաժշտական գրերը:</p> <p>Երաժշտ. VI.5. Աշակերտը կարող է ղեկավարել սեփական ուսումնական գործունեությունը:</p> <p>Երաժշտ. VI.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ:</p>	<p>Երաժշտ. VI.8. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների:</p> <p>Երաժշտ. VI.9. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը/արվեստը հաղորդակցության միջոց է:</p>	<p>Երաժշտ. VI.11. Աշակերտը կարող է համեմատել երաժշտական ստեղծագործությունները:</p> <p>Երաժշտ. VI.12. Աշակերտը ճանաչում է տարբեր տեսակի համույթների ու նվագախմբերի կազմը:</p>
---	---	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ. VI.1. Աշակերտը կարող է մասնակցել հանպատրաստից վարժություններին:

- Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.
- Միննույն երաժշտական դարձվածքը հնչեցնում է մաժորով ու մինորով:
 - Մաժորային ու մինորային եռաձայնության հնչյուններով հորինում է ռիթմիկ ու հնչերանգային մոդելներ:
 - Երգով ավարտում է ուսուցչի կամ համադասարանցու կողմից սկսած մեղեդին, պատասխանում է երաժշտական արտահայտությանը:
 - Երգում է ինտերվալներն օկտավի սահմաններում:
 - Սահմանում է ծանոթ երգի նախնական ինտերվալը:
 - Սովորած քանաստեղծության համար մեղեդի է ընտրում/հորինում:
 - Տրված երաժշտական դարձվածքը երգում է տարբեր աստիճաններից (*դիստոնիկ հաջորդականություն*):
 - Ծափահարությամբ/թակոցով ներկայացնում է ծանոթ երկչափ և եռաչափ կառուցվածքի մեղեդիները:
 - Համադասարանցիների հետ հերթափոխվելով՝ ծափահարությամբ հորինում է ռիթմիկ կոմպոզիցիաներ:

- Ներհյուսված ձևով կատարված ռիթմիկ պատկերը, ներդաշնակ հաջորդականությունը երգով համապատասխանեցնում է տարբեր երաժշտական ձայներին, ռիթմիկ պատկերներին:

Երաժշտ. VI. 2. Աշակերտը կարող է երգել մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համադասարանցիների հետ միասին ակորդներ է երգում:
- Մենակ, զույգի, խմբի հետ միասին, միաձայն ու երկձայն երգեր է երգում ժողովրդական և դասական երգացանկից:
- Կատարում է կանոնի տիպի վարժություններ, երգեր:
- Երաժշտական ստեղծագործությունը կատարելիս՝ տարբեր արտահայտչամիջոցներ է ընտրում և գործածում:

Երաժշտ. VI. 3. Աշակերտը կարող է սահմանել ու հաղորդել իրեն հետաքրքրող տրամադրությունը, սյուժեն, թեման:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշների հետ միասին պարզ տեսարաններ է բեմականացնում՝ կոնկրետ երաժշտական ստեղծագործության/հատվածի տրամադրությունը հաղորդելու նպատակով:
- Որոշակի տրամադրություն է արտահայտում մնջախաղով:
- Լսում է համադասարանցիների հայտնած կարծիքը սեփական կատարման վերաբերյալ:
- Գնահատում է համադասարանցիների կողմից կատարված թատերական էտյուդը:
- Կերպարի բնավորությանը երաժշտական հատված է համապատասխանեցնում:
- Կոնկրետ լուրը, սյուժեն համապատասխանեցնում է ծանոթ երաժշտական ստեղծագործությանը և, հնարավորության սահմաններում, բեմականացնում է այն՝ գործածելով իմպրովիզացված տեքստ:
- Կոնկրետ երաժշտական արտահայտությունները գործիքների միջև հնչեցնելիս՝ տեքստային երկխոսություն է կազմում:

Երաժշտ. VI.4. Աշակերտը կարող է գործածել երաժշտական գրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կարդում և գրում է նոտաները ջութակի, բասի բանալիների մեջ:
- Հայտնաբերում և գործածում է վերափոխման նշանները:
- Գրանցում է ծափահարությամբ կամ թակոցով հաղորդված ռիթմիկ գծագիրը:
- Ստեղծագործությունը, դրա հատվածը արտագրելիս՝ սխալներ թույլ չի տալիս:
- Փոքրածավալ դաշնամուրային ստեղծագործություն/հատված լսելիս՝ հետևում է նոտաների գրառմանը:
- Ստեղծագործությունը սովորելիս, համակարգչային ծրագրերով աշխատելիս՝ գործածում է նոտաների համակարգի իմացությունը:

Երաժշտ. VI.5. Աշակերտը կարող է դեկլավարել սեփական ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում է դասի համար անհրաժեշտ երաժշտական, գրական և տեսողական նյութը:

- Առանձին խնդիրները լուծելու համար՝ ծրագրում է կատարվելիք աշխատանքի հաջորդականությունը:
- Դասից, փորձից հետո խնամում է երաժշտական գործիքները, աուդիո-վիդեո սարքավորումը, ժապավենները:

Երաժշտ.VI.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբում բաշխում է աշխատանքը, գործառույթներն ու պարտականությունները:
- Նկատի է առնում և օգտագործում է խմբի անդամների հնարավորությունները:
- Ուրիշներին օգնում է լուծել կոնկրետ խնդիրը և, անհրաժեշտության դեպքում, ինքն է օգնություն խնդրում:
- Բանավեճի ժամանակ լսում և նկատի է առնում խմբի անդամի փաստարկը:
- Գնահատում է սեփական և ուրիշի կատարած աշխատանքը:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Երաժշտ.VI.7. Աշակերտը կարող է քննարկել ու գնահատել լսած երաժշտական ստեղծագործությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է ստեղծագործությունը, դրա հատվածը:
- Իր տպավորությունը փոխանցում է բառերով, նկարով, գրառման տեսքով:
- Բնութագրում է կատարողների կազմը:
- Լսելիս ճանաչում է ծանոթ երաժշտական ձևերը:
- Կոնկրետ երաժշտական հատվածը բնութագրում է ըստ մետրի, երաժշտական գործիքների, ձայնային տեմբրի:
- Քննարկում է երաժշտական ստեղծագործության կատարումը:
- Միջոցառումները ձևակերպելիս՝ գործածում է ծանոթ երաժշտական նյութը:

Երաժշտ.VI.8. Աշակերտը կարող է մասնակցել տարբեր տեսակի միջոցառումներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանի ներկայացմանը, դիմակահանդեսին, պարահանդեսին:
- Մասնակցում և ներկա է գտնվում դպրոցի հաշվետվական համերգին:
- Ներկա է գտնվում հանդիպում-երեկոյթներին. կոմպոզիտորի, կատարողի հետ:
- Համադասարանցիների հետ ներկա է գտնվում հանրային համերգին, ներկայացմանը:
- Էքսկուրսիաների է գնում արվեստագետների տուն-թանգարաններ:
- Մասնակցում է վիկտորինային և հարցաթերթիկ է կազմում վիկտորինայի համար:
- Լսարանի առջև ներկայանում է կատարողի, ստեղծագործողի կամ համերգավարի դերում:
- Ցածր դասարանցիներին օգնում է հանդեսի երաժշտական ձևավորման գործում:

Երաժշտ.VI.9. Աշակերտը հասկանում է և կարող է ցուցադրել, որ երաժշտությունը/արվեստը հաղորդակցության միջոց է:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գիտակցում է, որ երաժշտությունն օժանդակում է իրեն մարդկանց հետ շփվելու գործում:
- Գիտակցում է, որ երաժշտության համատեղ լսումը մարդկանց մեջ նույն ապրումներն է արթնացնում:
- Խոսում է այն մասին, որ նախորդ դարաշրջանում ստեղծված երաժշտական ստեղծագործությունը/արվեստի նմուշը այսօր էլ հասկանալի է իր համար:
- Մտաբերում է երաժշտական և արվեստի այլ բնագավառների ստեղծագործությունները, որոնց մեջ նույն գաղափարներն են արտահայտված:
- Խոսում է այն մասին, որ երաժշտությունն օգտագործվում է կինոյում, թատրոնում, լրատվամիջոցներում:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ.VI.10. Աշակերտը ճանաչում է վրացական և համաշխարհային երգարվեստի հայտնի նմուշներն ու դրանց ներկայացուցիչներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր եղանակներով փոխանցում է հայտնի երաժշտական ստեղծագործության թեման, ռիթմիկ պատկերը և ճանաչում է այն լսելիս:
- Խոսում է կոմպոզիտորների ստեղծագործության մասին:
- Լսում է և ճանաչում է հայտնի երաժիշտ-կատարողին՝ ըստ տարբեր հատկանիշների (*ձայնի տեսքով, ըստ երգացանկի...*):
- Լրացուցիչ տեղեկատվություն է գտնում իրեն հետաքրքրող ստեղծագործության, կոմպոզիտորի, կատարողի մասին:

Երաժշտ.VI.11. Աշակերտը կարող է համեմատել երաժշտական ստեղծագործությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սովորած ստեղծագործությունները համեմատում է իրար:
- Համեմատում է միևնույն ժանրի տարբեր ստեղծագործությունները և խոսում է դրանց հատկանիշների մասին (*ենթադրական կազմ, սոլո գործիք...*):
- Բնութագրում է ծանոթ երաժշտական ձևերը:
- Ժողովրդական երաժշտության հանրաճանաչ նմուշները տարբերում է ըստ Վրաստանի մարզերի:
- Խոսում է այն մասին, թե ինչու է իրեն դուր եկել այս կամ այն ստեղծագործությունը:

Երաժշտ.VI.12. Աշակերտը ճանաչում է տարբեր տեսակի համույթների ու նվագախմբերի կազմը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում և խմբավորում է գործիքները՝ հնչյունի ընդունման կարգի, նյութի համաձայն:
- Նկարում կամ կերտում է գործիքները, նվագախումբը, կատարողներին:
- Տարբերում է սիմֆոնիկ, կամերային, փողային, լարային նվագախմբի կազմը:
- Քննարկում է համույթի տարբեր կազմերը:

Ծրագրի բովանդակությունը

Հանպատրաստից վարժություններ.

- Երաժշտական լեզվի տարրերի, երաժշտական գործիքների գործածությամբ:
- Հնչյուն, ձայնային հզորություն, ռիթմ (*օստինատո, սինկոպա, կետագծային ռիթմ*), տեմպ, մետր, ռեգիստր, տեմբր, եղանակ (*մաժոր, մինոր*), տոն, ինտերվալները օկտավի սահմաններում, դիատոնիկ հաջորդականություն:

Երգեցողություն.

- Նվագակցությամբ և առանց դրա:
- Անհատականորեն, համույթում և խմբում:
- Միաձայն, երկձայն և պարզ եռաձայն երգեր, օրինակ, «Շինա վորգիլ», «Չոնգուրի», «Քրիստոս հարյավ», «Մրավալժամիեր» (տաղարան), «Ցիցինաթելա», Բ. Գուրգուլիա՝ «Ճոճ», Բ. Բորոխիձե՝ «Փաթիլներ», Ս. Յինցաձե՝ «Արտույտը», Ռ. Լադիձե՝ «Երգ Թրիլիսիի մասին», Վ. Ազարաշվիլի՝ «Դինամո», Ջ. Հերման՝ "Hello, Dolly", Է. դի Կասյուա՝ "O Sole mio", Լ. Ռիչ՝ "Endless Love" և այլն:

Կոմպոզիցիա, ներկայացում.

- Տեսարաններ ներկայացնել:
- Ներկայացնել ավարտված ձևով:

Երաժշտական գրեր.

- Ճանաչել ու գործածել վերափոխման նշանները:
- Արտագրել երաժշտական հատվածները:
- Երաժշտական գրառման գործածում՝ ստեղծագործությունը սովորելիս, համակարգչային ծրագրով աշխատելիս, երաժշտական ստեղծագործությունը լսելիս:

Երաժշտական տերմիններ.

- Մեղեդի, ռիթմ, տևողություն, ընդմիջում, ռիթմ, տեմպ, տեմբր, եղանակ (մաժոր, մինոր), տոն, տոնիկ, կայուն, տատանվող աստիճաններ, կվինտային շրջան:
- Դինամիկ մանրամասնություններ. Mezzo Forte, Mezzo Piano:
- Կատարման եղանակներ. ստակատո, լեգատո:
- Կոմպոզիտոր, ժողովրդական բանահյուսություն, բանահավաք, երաժշտագետ, պիես, համերգ, փորձ, նվագախումբ, դիրիժոր, ռեգենտ, մեսս, մենակատար, նվագակցում, բալետ, կորդե-բալետ, բալերինա, բալետի պարող, բալետմայստեր, ադաջո, պա դե դե, թատերական/օպերային/բալետի խումբ, գործողություն/ակտ, օպերա, մեներգ, արիոզո, ռեչիտատիվ, համույթ, զուգերգ, եռյակ, կվարտետ, կվինտետ, ժանր:
- Նվագախումբ (*սիմֆոնիկ, կամերային, փողային, լարային*), խմբեր:

Երաժշտական ձևեր.

- Պարզ եռամաս, քառատող, ռոնդո, փոփոխական:

Երաժշտություն լսելը.

- Լսել, ճանաչել տարբեր դարաշրջանների հայտնի ստեղծագործությունները:
- Լսել, ճանաչել վրացական ժողովրդական երաժշտությունը:

Միջոցառումներ.

- Դպրոցի համերգը:
- Դասարանի ներկայացումը, դիմակահանդեսը, հանդիպում-երեկույթները:
- Վիկտորինա:
- Ներկա գտնվել հանրային համերգին, բեմադրությանը:
- Էքսկուրսիա արվեստագետի տուն-թանգարան:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում.

- Հասկանալ տրամադրությունը, հաղորդել տպավորությունները, խոսել սեփական հայացքների մասին:
- Տեղեկատվություն ստեղծագործության և հեղինակի մասին՝ ծրագիր (պլուժե, լիբրետո), դարաշրջան, ոճ, ժանր, կենսագրական տվյալներ:
- Տեղեկատվություն կատարողների մասին:

Երաշխավորված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր: Հատվածներ Բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի երգարվեստի նմուշներից, վրաց կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, «Ծինծղարո», *իմերական «Նադուրի», մեզրելական «Օդոհա», ռաճական «Ալիլո», սվանական «Լիլե», «Քրիստոս հարյավ տաղարանը, բրազիլական «Գվանտանա մերա» երգը, Վ. Դոլիձե՝ հատվածներ «Քեթո և Կոտե» օպերայից, Ն. Գաբունիա՝ «Առակ» գործիքային համույթի և մենակատարների համար (հատվածներ), Բ. Կեճաղմաձե՝ «Լաշարի ճանապարհին» խումբը՝ «Փշավական ճեպանկարներ» խմբերգական ցիկլից Ա. Կալանդաձեի բանաստեղծություններով, Վ. Ազարաշվիլի՝ «Նոկոյուն» կամերային նվագախմբի համար, Բ.Ս. Բախ՝ ջութակային համերգ լա մինոր, Լ. Բեթհովեն՝ սիմֆոնիա #5, I մաս, Թեմա ու վեց փոփոխություն, ֆա մաժոր, Ֆ. Շոպեն՝ Մագուրեկի, պատմ. 33 #2, ռե մաժոր/ պատմ. 24 #2, դո մաժոր, վալս #7 դո մինոր, Ժ. Բիզե՝ նախերգանք, Տորեադորի քառատողերը, երեխաների խումբը «Կարմեն» օպերայից, Հ. Բերլիոզ՝ հատվածներ «Երևակայական սիմֆոնիայից», Կ. Սեն-Սանս՝ «Բնտրողուկցիա և Ռոնդո Կապրիչիոզո», Ջ. Վերդի՝ կվարտետ «Ռիգոլետո» օպերայից, Վ.Ա. Մոցարտ՝ Պապագենոյի և Պապագենայի զուգերգը, գիշերային թագուհու մեներգը «Կախարդական ֆլեյտա» օպերայից, Ա. Լերներ, Փ. Լոու՝ հատվածներ «Բմ չքնաղ լեդի» մյուզիքլից և այլն:*

Գլուխ Լ

Բազային աստիճանի առարկայական իրազեկությունները

**VII դասարան
Երաժշտություն**

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ.VII.1. Աշակերտը կարող է մասնակցել իմպրովիզացիայի գործընթացին:</p>	<p>Երաժշտ. VII .5. Աշակերտը կարող է վերլուծել լսած երաժշտական ստեղծագործությունը:</p>	<p>Երաժշտ.VII.7. Աշակերտը ճանաչում է վրաց և համաշխարհային երգարվեստի հայտնի նմուշներն ու կարող է բնութագրել դրանք:</p>
<p>Երաժշտ.VII.2. Աշակերտը կարող է երգել համադասարանցիների հետ:</p>	<p>Երաժշտ.VII.6. Աշակերտը կարող է համադասարանցիներին ծանոթացնել երգարվեստի նմուշի կամ երաժիշտի ստեղծագործությանը:</p>	<p>Երաժշտ.VII.8. Աշակերտն ընկալում է երաժշտությունը, որպես լրատվամիջոց և հաղորդակցության միջոց:</p>
<p>Երաժշտ.VII.3. Աշակերտը կարող է տարբեր առաջադրանքներ կատարել՝ գործածելով երաժշտական-համակարգչային ծրագրերը:</p>		
<p>Երաժշտ.VII.4. Աշակերտը կարող է մասնակցել ուսումնական նախագծին:</p>		

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ

Երաժշտ.VII.1. Աշակերտը կարող է մասնակցել իմպրովիզացիայի գործընթացին:

- Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.
- Երաժշտական դարձվածքը երգում է հաջորդական տեղափոխությամբ:
 - Երգով ավարտում է ուսուցչի կամ համադասարանցու կողմից սկսած մեղեդին, պատասխանում է երաժշտական արտահայտությանը, ռիթմիկ պատկերին:
 - Սովորած բանաստեղծության համար մեղեդի է ընտրում:
 - Ձայնը հարմարեցնում է համադասարանցու կողմից երգված մեղեդուն:

Երաժշտ. VII. 2. Աշակերտը կարող է երգել համադասարանցիների հետ միասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժողովրդական և դասական երգացանկից միաձայն ու երկձայն երգեր է երգում խմբի հետ:
- Կատարում է կանոնի տիպի վարժություններ, երգեր:
- Երաժշտական ստեղծագործությունը կատարելիս՝ տարբեր արտահայտչական միջոցներ է ընտրում:
- Երաժշտական ստեղծագործությունների հատվածներ/երգեր է կատարում և հենվում է նոտաների գրառման վրա:

Երաժշտ. VII. 3. Աշակերտը կարող է տարբեր առաջադրանքներ կատարել՝ գործածելով երաժշտական-համակարգչային ծրագրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գիտի երաժշտական-համակարգչային ծրագրի տարբեր հնարավորությունները (*երաժշտության ձայնագրում, ֆակտուրայի, տեմբրի ընտրություն, ռիթմիկ աջակցություն*):
- Տրված առաջադրանքը կատարելիս՝ գործածում է տեսական գիտելիքները (*երաժշտական այբուբեն, ձև, ներդաշնակություն*):

Երաժշտ. VII.4. Աշակերտը կարող է մասնակցել ուսումնական նախագծին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեսական նյութ է գտնում, ռեսուրս է ստեղծում:
- Մասնակցում է համերգի, ներկայացման, հեռուստա/ռադիոհաղորդման բեմադրությանը, ամսագրի պատրաստմանը:
- Մասնակցում է նախագծի ներկայացմանը:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Երաժշտ. VII .5. Աշակերտը կարող է վերլուծել լսած երաժշտական ստեղծագործությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է երաժշտական ստեղծագործությունը լսելուց առաջացած տպավորության մասին:
- Սահմանում է երաժշտական ստեղծագործության ժանրը (*օպերա, բալետ, սիմֆոնիա, գործիքային համերգ...*), ոճը (*դասական, ժողովրդական, ժամանակակից*):
- Լսելիս բնութագրում է երաժշտության արտահայտչական միջոցները:
- Խոսելիս գործածում է երաժշտական տերմինները:
- Լսելիս ճանաչում է երաժշտական ստեղծագործությունները:

Երաժշտ. VII. 6. Աշակերտը կարող է համադասարանցիներին ծանոթացնել երգարվեստի նմուշի կամ երաժիշտի ստեղծագործությանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է իրեն հետաքրքրող երաժշտական ստեղծագործությունը/կատարողին/կոմպոզիտորին:

- Գտնում և մշակում է երաժշտական ստեղծագործության, կոմպոզիտորի, կատարողի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Համադասարանցիներին ծանոթացնում է երաժշտական ստեղծագործությունը, այս կամ այն երաժիշտի մասին ձեռք բերած տեղեկատվությունը, սեփական տպավորությունը:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ.VII.7. Աշակերտը ճանաչում է վրաց և համաշխարհային երգարվեստի հայտնի նմուշներն ու կարող է բնութագրել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համեմատում է միևնույն ժանրի տարբեր ստեղծագործությունները, խոսում է դրանց հատկանիշների մասին (*ենթադրական կազմ, սոլո գործիք...*):
- Համեմատում է միևնույն ժանրի տարբեր ստեղծագործությունները:
- Բնութագրում է ծանոթ երաժշտական ձևերը:
- Ժողովրդական երաժշտության հանրաճանաչ նմուշները տարբերում է ըստ Վրաստանի մարզերի:
- Համեմատում է տարբեր բարբառների միևնույն ժանրի ժողովրդական երգերը:
- Խոսում է այն մասին, թե ինչու է իրեն դուր եկել այս կամ այն ստեղծագործությունը, կիրառում է երաժշտական տերմինաբանությունը:

Երաժշտ.VII.8. Աշակերտն ընկալում է երաժշտությունը, որպես լրատվամիջոց և հաղորդակցության միջոց:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քննարկում է երաժշտության դերը մարդու կյանքում (*Տաղարան, Նանա, Հովվի շվին, Մրավալժամիերի...*):
- Գիտակցում է, որ երաժշտությունն օժանդակում է մարդկանց հետ հարաբերության մեջ:
- Գիտակցում է, որ երաժշտության համատեղ լսումը մարդկանց մեջ նույն ապրումներն է արթնացնում:
- Խոսում է այն մասին, որ նախորդ դարաշրջանում ստեղծված երաժշտական ստեղծագործությունը/արվեստի նմուշը այսօր էլ հասկանալի է իրեն:
- Քննարկում է, թե ինչ է իմացել այս կամ այն մշակույթի մասին՝ ծանոթանալով դրա երաժշտությանը:
- Քննարկում է, թե ինչպես է երաժշտությունն օգտագործվում այլ ոլորտներում՝ կինո, թատրոն, լրատվամիջոցներ:

Ծրագրի բովանդակությունը

Հանպատրաստից վարժություններ.

- Մեղեդու համար տեքստ ընտրել/փոխել տեքստը:
- Բանաստեղծական տեքստի համար երաժշտություն ընտրել:
- Հարմարեցնել ձայնը:

Երգեցողություն.

- Խմբի հետ կատարել կանոնի տիպի մեղեդիներ:
- Երգել նվագակցությամբ և առանց դրա:
- Միաձայն, երկձայն և պարզ եռաձայն երգեր՝ վրացական ու համաշխարհային ժողովրդական և մասնագիտական երգացանկից, օրինակ, «Միսատուրա» (մեզրելական), «Իմերական ճամփորդական», «Քրիստոս հարյավ ի մեռելոց» (հասարակ եղանակ), "Silent Night", Կ. Մեն-Սանս՝ "Ave Maria" և այլն:

Երաժշտական-համակարգչային ծրագրեր.

- Print Music, Song Writer, Note Pad, Logic, Cubase;
- Առաջադրանքներ կատարել:

Մասնակցությունը նախագծերին.

- Տեսական նյութ գտնել, ռեսուրս ստեղծել:
- Նախագիծ պատրաստել ու մասնակցել դրա ներկայացմանը:

Երաժշտության տեսություն և պատմություն.

- Երաժշտական ժանրեր (օպերա, բալետ, սիմֆոնիա, գործիքային համերգ...):
- Երաժշտական ոճեր (դասական, ժողովրդական, ժամանակակից):
- Երաժշտական տերմինաբանություն:

Երաշխավորված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր: Հատվածներ Բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի, XX դարի երգարվեստի նմուշներից, վրաց կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, գուրիական «Խաղաղություն մեզ», «Նաղուրի», քարթլ-կախերթական «Ձմեռ է», մեզրելական «Աբա, ուլա», «Սուրբ Նինոյի տրոպարը» տաղարանը, կորսիկյան ավանդական երգ՝ Letter'a mamma/Paghjella."Tanti passi. . .", ադրբեջանական երգ՝ "Qarabağ Şikəstəsi", Օ. Թաքթաքիշվիլի՝ հատվածներ «Մինդիա» օպերայից, Շ. Մշվելիձե՝ «Զվիադուրի» սիմֆոնիկ պոեմ, I մաս, Բ. Կվերնաձե՝ նվագախմբային «Ֆանտազիա պար», Գ. Ղանչելի՝ կինոերաժշտություն, Ի.Ս. Բախ՝ Իտալական համերգ, Վ.Ա. Մոցարտ՝ «Սգերգ», Լ. Բեթհովեն՝ դաշնամուրային սոնատ #8, համերգ ջութակի և նվագախմբի համար, Ֆ. Շոբերտ՝ «Չավարտված սիմֆոնիա», Պ. Չայկովսկի՝ IV սիմֆոնիա, IV մաս, Ջ. Վերդի՝ հատվածներ «Տրավիատա» օպերայից, Ռ. Վագներ՝ նախերգանք «Տանհոյզեր» օպերայի համար, Ֆ. Լիստ՝ հունգարական ռապսոդիա #2, 6, Ա. Դվորժակ՝ համերգ թավջութակի ու նվագախմբի համար, Մ. Ռավել՝ «Բոլերո», Ջ. Պուչինի՝ Կալաֆի մեներգը «Տուրանդոտ» օպերայից, Բ. Քսենակիս՝ "Metastasis"; J. Lacalle – Amapola, H. Ashman/A. Menken - Under The Sea, J.Livingston-R.Evans - Mona Lisa, L. Bart՝ հատվածներ "Oliver", Michael Jackson - Billy Jean, Metallica - Enter Sandman մյուզիքլից և այլն:

VIII դասարան

Երաժշտություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ. VIII.1. Աշակերտը կարող է մասնակցել իմպրովիզացիայի գործընթացին:</p> <p>Երաժշտ. VIII.2. Աշակերտը կարող է երգել համադասարանցիների հետ:</p> <p>Երաժշտ. VIII.3. Աշակերտը կարող է տարբեր առաջադրանքներ կատարել՝ գործածելով երաժշտական-համակարգչային ծրագրերը:</p> <p>Երաժշտ. VIII.4. Աշակերտը կարող է մասնակցել ուսումնական նախագծին:</p>	<p>Երաժշտ. VIII .5. Աշակերտը կարող է վերլուծել լսած երաժշտական ստեղծագործությունը:</p> <p>Երաժշտ. VIII.6. Աշակերտը կարող է համադասարանցիներին ծանոթացնել երգարվեստի նմուշի կամ երաժիշտի ստեղծագործության հետ:</p>	<p>Երաժշտ. VIII.7. Աշակերտը ճանաչում է վրաց և համաշխարհային երգարվեստի հայտնի նմուշներն ու կարող է բնութագրել դրանք:</p> <p>Երաժշտ. VIII.8. Աշակերտն ընկալում է երաժշտությունը, որպես լրատվամիջոց և հաղորդակցության միջոց:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ

Երաժշտ. VIII.1. Աշակերտը կարող է մասնակցել իմպրովիզացիայի գործընթացին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երաժշտական դարձվածքը երգում է հաջորդական տեղափոխությամբ:
- Երգով ավարտում է ուսուցչի կամ համադասարանցու կողմից սկսած մեղեդին, պատասխանում է երաժշտական արտահայտությանը, ռիթմիկ պատկերին:
- Սովորած բանաստեղծության համար մեղեդի է ընտրում:
- Ձայնը հարմարեցնում է համադասարանցու կողմից երգված մեղեդուն:

Երաժշտ. VIII.2. Աշակերտը կարող է երգել համադասարանցիների հետ միասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժողովրդական և դասական երգացանկից միաձայն ու երկձայն երգեր է երգում խմբի հետ:
- Կատարում է կանոնի տիպի վարժություններ, երգեր:
- Երաժշտական ստեղծագործությունը կատարելիս՝ տարբեր արտահայտչամիջոցներ է ընտրում:
- Երաժշտական ստեղծագործությունների հատվածներ/երգեր է կատարում և հենվում է նոտաների գրառման վրա:

Երաժշտ.VIII.3. Աշակերտը կարող է տարբեր առաջադրանքներ կատարել՝ գործածելով երաժշտական-համակարգչային ծրագրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գիտի երաժշտական-համակարգչային ծրագրի տարբեր հնարավորությունները *(երաժշտության ձայնագրում, ֆակտուրայի, տեմբրի ընտրություն, ռիթմիկ և ակորդային աջակցություն):*
- Տրված առաջադրանքը կատարելիս՝ գործածում է տեսական գիտելիքները *(երաժշտական այբուբեն, ձև, ներդաշնակություն):*
- Պարզ երաժշտական կոմպոզիցիա է ստեղծում:

Երաժշտ.VIII.4. Աշակերտը կարող է մասնակցել ուսումնական նախագծին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է նախագծի նպատակի որոշմանն ու ծրագրմանը:
- Տեսական նյութ է գտնում, ռեսուրս է ստեղծում:
- Մասնակցում է համերգի, ներկայացման, հեռուստա/ռադիոհաղորդման բեմադրությանը, ամսագրի պատրաստմանը:
- Մասնակցում է նախագծի ներկայացմանն ու գնահատմանը:

Ուղղություն. Հաղորդակցություն, մեկնաբանություն

Երաժշտ.VIII.5. Աշակերտը կարող է վերլուծել լսած երաժշտական ստեղծագործությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է երաժշտական ստեղծագործությունը լսելուց առաջացած տպավորության մասին:
- Սահմանում է երաժշտական ստեղծագործության ժանրը *(օպերա, բալետ, սիմֆոնիա, գործիքային համերգ...)*, ոճը *(դասական, ժողովրդական, ժամանակակից):*
- Լսելիս բնութագրում է երաժշտության արտահայտչական միջոցները:
- Բնութագրում է կատարողների կազմը. գործիքային *(մեծ և կամերային նվագախումբ, կամերային համույթ)*, ձայնային, ձայնային-գործիքային *(մեծ և կամերային կազմ):*
- Խոսելիս գործածում է արվեստի/երաժշտության տերմինաբանությունը:
- Լսելիս ճանաչում է երաժշտական ստեղծագործությունները:

Երաժշտ.VIII.6. Աշակերտը կարող է համադասարանցիներին ծանոթացնել երգարվեստի նմուշի կամ երաժիշտի ստեղծագործության հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է իրեն հետաքրքրող երաժշտական ստեղծագործությունը/ կատարողին/ կոմպոզիտորին:
- Գտնում և մշակում է երաժշտական ստեղծագործության, կոմպոզիտորի, կատարողի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Ներկայացնում է երաժշտական ստեղծագործության, այս կամ այն երաժիշտի մասին ձեռք բերած տեղեկատվությունը, սեփական տպավորությունը:
- Գտնում է երաժշտական (*աուդիո-վիզուալ*) նյութ, անհրաժեշտ սարքավորումը և կիրառում է դրանք ներկայացման ժամանակ:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ. VIII.7. Աշակերտը ճանաչում է վրաց և համաշխարհային երգարվեստի հայտնի նմուշներն ու կարող է բնութագրել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համեմատում է միևնույն ժանրի տարբեր ստեղծագործությունները և խոսում է դրանց հատկանիշների մասին:
- Համեմատում է տարբեր բարբառների միևնույն ժանրի ժողովրդական երգերը:
- Համեմատում է միևնույն հեղինակի/դարաշրջանի ստեղծագործությունը (*բնորոշ ժանրեր, ոճ, թեմատիկա, ձեռագիր...*):
- Բնութագրում է ծանոթ երաժշտական ձևերը և համեմատում այդ ձևերով գրված երաժշտական ստեղծագործությունները:
- Պատասխանում է հայտնի կոմպոզիտորի, կատարողի կենսագրության, ստեղծագործության հետ առնչվող հարցերին:

Երաժշտ. VIII.8. Աշակերտն ընկալում է երաժշտությունը, որպես լրատվամիջոց և հաղորդակցության միջոց:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երաժշտական ոճերը տարբերում է ըստ մշակույթի ու դարաշրջանի:
- Քննարկում է, թե ինչ է իմացել այս կամ այն մշակույթի ու դարաշրջանի մասին՝ ծանոթանալով կոնկրետ երաժշտական ստեղծագործության հետ:
- Խոսում է այն մասին, թե ինչպես կարելի է երաժշտական արտահայտչականության տարբեր եղանակների միջոցով արտահայտել կոնկրետ երաժշտական տրամադրությունը, կոմպոզիտորի միտքը:
- Քննարկում է երաժշտության դերը արվեստի այլ բնագավառների համար:

Ծրագրի բովանդակությունը

Իմպրովիզացիոն վարժություններ.

- Երաժշտական դարձվածքի հաջորդական տեղափոխություն:
- Սովորած բանաստեղծության համար երաժշտություն ընտրել:
- Հարմարեցնել ձայնը:

Երգեցողություն.

- Խմբի հետ կատարել կանոնի տիպի մեղեդիներ:

- Երգել նվագակցությամբ և առանց դրա:
- Միաձայն, երկձայն և պարզ եռաձայն երգեր վրացական ու համաշխարհային ժողովրդական և մասնագիտական երգացանկից, օրինակ, «Մեծ ժամանակվանից ճանաչեցի քեզ» (գուրիական), «Վրացի, ձեռքդ տուր սրին» (քարթլ-կախեթական), «Սուրբ Աստված» (հասարակ եղանակ), Վ. Ա. Մոցարտ՝ "Die Nachtigall", the Beatles - "Can't Buy Me Love" և այլն:

Երաժշտական-համակարգչային ծրագրեր.

- Logic, Cubase, Finale;
- Առաջադրանքներ կատարել:
- Ստեղծել պարզ կոմպոզիցիաներ:

Մասնակցությունը նախագծերին.

- Տեսական նյութ գտնել, ռեսուրս ստեղծել:
- Մասնակցել նախագծի պատրաստմանը, ներկայացմանն ու գնահատմանը:

Երաժշտության տեսություն և պատմություն.

- Երաժշտական ժանրեր (օպերա, բալետ, սիմֆոնիա, գործիքային համերգ...)
- Երաժշտական ոճեր (դասական, ժողովրդական, ժամանակակից):
- Կատարողների կազմը. գործիքային (մեծ և կամերային նվագախումբ, կամերային համույթ), ձայնային, ձայնային-գործիքային (մեծ և կամերային կազմ):
- Երաժշտության/արվեստի տերմինաբանությունը:

Երաշխավորված լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր: Հատվածներ Բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի, XX դարի և վրաց կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, *աջարական քառաձայն նաղուրի, մեզրելական «Կուչիսի բեդիների», կախեթական «Ճոնա», «Շեն իսար վենախի» տաղարանը (Փայիաշվիլու տարբերակը), սարդինական բազմաձայն երգ Actores Alidos – Chelu e mare/Tralallera, հնդկական ռազա "Harikambhoji", Ա. Մաճավարիանի՝ ջութակային համերգ, Ս. Նասիձե՝ սիմֆոնիա «Փիրոսմանի» (հատվածներ), Ս. Շուղիաշվիլի՝ «Էզզերսիսի» դաշնամուրի համար, Գ. Ֆ. Հենդել՝ "Alleluia" խումբը «Մեսիա» պերճախոսությունից, Ֆ. Շոպեն՝ բալադ #1, Ջ. Վերդի՝ հատվածներ «Աիդա» օպերայից, «Սզերգ» (հատվածներ), Ռ. Վանգեր՝ «Վալկիրիենների թռիչքը», «Նիբելունգների մատանին» տետրոլոգիան, «Վալկիրիա» օպերայից, Պ. Չայկովսկի՝ համերգ դաշնամուրի ու նվագախմբի համար #1, Ֆ. Մենդելսոն՝ համերգ ջութակի ու նվագախմբի համար, Կ. Դեբիուս՝ նախերգանք «Պեկի պարը», «Լուսնի լույսը» դաշնամուրային պիես, Բ. Ստրավինսկի՝ «Ռուսական պար» «Պետրուշկա» բալետից (դաշնամուրային տարբերակը), Ա. Շոնբերգ՝ կամերային սիմֆոնիա, Դ. Շոստակովիչ՝ համերգ դաշնամուրի ու նվագախմբի համար #1, Ջ. Կեյջ՝ «Ջրի խաղը», Ֆ. Սինատրա՝ "New York, New York", A. Barozzo – "Brazil", The Beatles – "Can's buy my Love", J. Styne՝ հատվածներ "Funny Girl", Sting - Shape Of My Heart, Motley Crue – "Home sweet home" մյուզիքլից և այլն:*

**IX դասարան
Երաժշտություն**

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Երաժշտ. IX.1. Աշակերտը կարող է մասնակցել իմպրովիզացիայի գործընթացին:</p>	<p>Երաժշտ. IX. 5. Աշակերտը կարող է վերլուծել լսած երաժշտական ստեղծագործությունը:</p>	<p>Երաժշտ. IX.8. Աշակերտը կարող է բնութագրել երաժշտական ստեղծագործության կառուցվածքային ու տեսական կողմերը:</p>
<p>Երաժշտ. IX.2. Աշակերտը կարող է երգել համադասարանցիների հետ միասին:</p>	<p>Երաժշտ. IX. 6. Աշակերտը կարող է համադասարանցիներին ծանոթացնել երգարվեստի նմուշի կամ երաժիշտի ստեղծագործության հետ:</p>	<p>Երաժշտ. IX.9. Աշակերտը գիտակցում է երաժշտության դերը հասարակության կյանքում:</p>
<p>Երաժշտ. IX.3. Աշակերտը կարող է կոմպոզիցիաներ ստեղծել՝ գործածելով երաժշտական-համակարգչային ծրագրերը:</p>	<p>Երաժշտ. IX.7. Աշակերտը կարող է քննարկել սեփական և ուրիշի ստեղծագործությունը:</p>	
<p>Երաժշտ. IX.4. Աշակերտը կարող է մասնակցել ուսումնական նախագծին:</p>		

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ

Երաժշտ. IX. 1. Աշակերտը կարող է մասնակցել իմպրովիզացիայի գործընթացին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երգելով ու նվագելով՝ տարբեր երաժշտական ձայները, ռիթմիկ պատկերները հարմարեցնում է համադասարանցու կողմից կատարված ռիթմիկ պատկերին, պարզ ակորդային հաջորդականությանը:
- Համադասարանցիների հետ երաժշտական-դրամատիկական էտյուդներ, կոմպոզիցիաներ է ստեղծում՝ ձայնի, գործիքի, շարժման միջոցով:

Երաժշտ. IX. 2. Աշակերտը կարող է երգել համադասարանցիների հետ միասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կատարում է երկձայն ու եռաձայն վրացական ժողովրդական և այլ ժողովուրդների երգեր:
- Երաժշտական ստեղծագործությունների հատվածներ/երգեր է կատարում և հենվում է նոտաների գրառման վրա:

Երաժշտ. IX. 3. Աշակերտը կարող է կոմպոզիցիաներ ստեղծել՝ գործածելով երաժշտական-համակարգչային ծրագրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համակարգչային ծրագրերը գործածում է առաջադրված նպատակին համապատասխան (*երաժշտության ձայնագրում, ֆակտուրայի, տեմբրի ընտրություն, ակորդային աջակցություն*):
- Կոմպոզիցիա ստեղծելիս՝ կիրառում է տեսական գիտելիքները (*երաժշտության այբուբենի, երաժշտական ձևի, ներդաշնակության հարցերը*):
- Երաժշտական կոմպոզիցիաներ է ստեղծում:
- Երաժշտական կոմպոզիցիայի մեջ արտացոլում է գեղարվեստական գրականության, կերպարվեստի ու թատերական արվեստի նմուշներից առաջացած տպավորությունները:

Երաժշտ. IX. 4. Աշակերտը կարող է մասնակցել ուսումնական նախագծին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մահմանում է նախագծի նպատակը:
- Ծրագրում է նախագիծն ու բաշխում գործառույթները:
- Տեսական նյութ է գտնում, ռեսուրս է ստեղծում:
- Մասնակցում է համերգի, ներկայացման, հեռուստա/ռադիոհաղորդման բեմադրությանը, ամսագրի պատրաստմանը:
- Մասնակցում է նախագծի ներկայացմանն ու գնահատմանը:

Ուղղություն. Հաղորդակցություն, մեկնաբանություն

Երաժշտ. IX. 5. Աշակերտը կարող է վերլուծել լսած երաժշտական ստեղծագործությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է երաժշտական ստեղծագործությունը լսելուց առաջացած տպավորության մասին:
- Երաժշտական ստեղծագործությունը բնութագրում է ըստ ձևի, ժանրի, ոճի ու երաժշտական-արտահայտչական միջոցների:
- Խոսելիս գործածում է արվեստի/երաժշտության տերմինաբանությունը:
- Լսելիս ճանաչում է երաժշտական ստեղծագործությունները:

Երաժշտ. IX.6. Աշակերտը կարող է համադասարանցիներին ծանոթացնել երգարվեստի նմուշի կամ երաժիշտի ստեղծագործության հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է իրեն հետաքրքրող երաժշտական ստեղծագործությունը/ կատարողին/ կոմպոզիտորին:
- Գտնում և մշակում է երաժշտական ստեղծագործության, կոմպոզիտորի, կատարողի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Երաժշտական ստեղծագործության, այս կամ այն երաժիշտի վերաբերյալ ձեռք բերած տեղեկատվությունը, սեփական տպավորությունը ներկայացնում է գեկույցի/հոդվածի տեսքով:
- Գտնում է երաժշտական (*աուդիո-վիդեո*) նյութ, անհրաժեշտ սարքավորումը և կիրառում է դրանք ներկայացման ժամանակ:
- Ղեկավարում է քննարկումը, հարցեր է տալիս և պատասխանում է հարցերին:
- Տարածում է ձեռք բերած նյութը: Արխիվ է ստեղծում, ուրիշների հետ միասին:

Երաժշտ. IX.7. Աշակերտը կարող է քննարկել սեփական և ուրիշի ստեղծագործությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասաժամին կատարված ստեղծագործական առաջադրանքի, հանրային, դպրոցական համերգի քննարկմանը:
- Գրախոսություն է գրում հանրային, դպրոցական համերգի մասին:
- Կռռեկտ է միտքն արտահայտելու ժամանակ:

Ուղղություն. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Երաժշտ. IX.8. Աշակերտը կարող է բնութագրել երաժշտական ստեղծագործության կառուցվածքային ու տեսական կողմերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սովորած ստեղծագործությունները համեմատում է իրար՝ ժանր, ոճ, դարաշրջան, հեղինակ:
- Ստեղծագործությունները համեմատելու հիման վրա՝ տարբերում է հեղինակի ձեռագիրը:
- Համեմատում է տարբեր կատարումներն ու խոսում է «մեկնաբանության» մասին:
- Խոսում է երաժշտական ստեղծագործության տեսական բովանդակության մասին (*լիրիկական, դրամատիկական, էպիկական, հերոսա-դրամատիկական, ծիծաղաշարժ և այլն*):
- Խոսում է երաժշտական ստեղծագործության կոմպոզիցիոն կառուցվածքի մասին:
- Քննարկում է ժողովրդական երգի հատկանիշները (*բարբառ, ժանր, թեմատիկա, կատարողների կազմը*):

Երաժշտ. IX.9. Աշակերտը գիտակցում է երաժշտության դերը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուճերը բնութագրում է ըստ մշակույթի ու դարաշրջանի:

- Խոսում է ժողովրդական երաժշտության սոցիալական նշանակման մասին (*առնչությունը կենցաղի հետ, կոլեկտիվ կատարողականություն, բանավոր հաղորդման ավանդույթ, անանունություն, մշտական փոփոխականություն*):
- Գիտի մասնագիտական երաժշտության գործառույթի համար անհրաժեշտ բաղադրիչները. կոմպոզիտոր, կատարող, լսող:
- Քննարկում է երաժշտության դերն արվեստի այլ բնագավառներում:
- Համեմատում է երաժշտության հետ առնչվող ավանդական ու ժամանակակից մասնագիտությունները՝ պրոդյուսեր, ռեժիսոր, դիջեյ, ձայնային օպերատոր:
- Բնութագրում է ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններն ու դրանց ազդեցությունը երգարվեստի վրա:
- Մեկնաբանում է, թե ինչպես է կարող երաժշտությունն ուսումնասիրելիս ստացած գիտելիքը և կարողությունները գործածել տարբեր մասնագիտություններում:
- Հետազոտում է երաժշտության տարածման/հաղորդման միջոցները (*երգիչների ընտանիքները, դպրոցները... երաժշտական գրերի տարբեր համակարգեր, օրինակ, վրացական գրեր...*) տարբեր ժամանակաշրջաններում:
- Կոնկրետ նմուշների օրինակով, քննարկում է երաժշտության դերը հասարակության կյանքում (*օրհներգի դերն ու նշանակությունը պետության համար, Դ. Շոստակովիչի VII սիմֆոնիան՝ Լենինգրադի շրջափակման ժամանակ, «Մարսելիեզա»-ն՝ Ֆրանսիայի հեղափոխման ժամանակ, «Շավիեզո»-ն, «Չեմո կարգո քվեդանավ»՝ 80-ական թվականների ազգային շարժման ժամանակ...):*

Ծրագրի բովանդակությունը

Հանապատրաստից վարժություններ.

- Մեղեդու համար տեքստ ընտրել, փոխել տեքստը:
- Երաժշտություն ընտրել բանաստեղծական տեքստի համար:
- Հարմարեցնել ձայնը:

Երգեցողություն.

- Խմբի հետ կատարել կանոնի տիպի մեղեդիներ:
- Երգել նվագակցությամբ և առանց դրա:
- Երկձայն ու եռաձայն երգեր կատարել խմբի հետ:
- Երգացանկ ընտրել:
- Արտահայտչական եղանակներ ընտրել:
- Երկձայն ու եռաձայն երգեր վրացական ու համաշխարհային ժողովրդական և մասնագիտական երգացանկից, օրինակ, «Ասլանուրի մրավալժամիերի» (ռաճական), «Նանիլա» (սվանական), «Շեն խար վենախի», *L. Guglielmi – "La Vie en Rose"*, *Ֆ. Լիստ "Christus ist geboren" և այլն:*

Երաժշտական-համակարգչային ծրագրեր.

- Sibelius, Finale, Cubase, Logic;
- Առաջադրանքներ կատարել:
- Կոմպոզիցիա ստեղծել:

Երաժշտական ստեղծագործություններ.

- Հատվածներ տարբեր դարաշրջանների կոմպոզիտորների հայտնի ստեղծագործություններից:
- Լսել, ճանաչել վրացական ժողովրդական ու մասնագիտական ստեղծագործությունները:

Մասնակցությունը նախագծերին.

- Նախագծի ծրագրում ու վերլուծում:
- Նախագծի պատրաստում, ներկայացում:

Երաժշտության տեսություն և պատմություն.

- Ժանր, ոճ, դարաշրջան:
- Գեղարվեստական երաժշտական ուղղությունների ականավոր ներկայացուցիչները:
- Երաժշտական ստեղծագործության տեսական բովանդակությունը (*լիրիկական, դրամատիկական, էպիկական, հերոսա-դրամատիկական, ծիծաղաշարժ և այլն*):
- Երաժշտական ստեղծագործության կոմպոզիցիան. գործիքային ձևեր (եռամաս, ռոնդո, փոփոխություններ, սոնատային, մինիատյուրա, սոնատային-սիմֆոնիկ ցիկլ), ձայնային ձևեր (քառատող, միջանցուկ ձևեր):

Ժողովրդական երաժշտություն.

- Բարբառ, ժանր, թեմատիկա, կատարողների կազմ:
- Ժողովրդական երաժշտության սոցիալական նշանակումը (*առնչությունը կենցաղի հետ, կոլեկտիվ կատարողականություն, բանավոր հաղորդման ավանդույթ, անանունություն, մշտական փոփոխականություն*):

Երաժշտական լսողական նյութ.

- Ժողովրդական երգեր: Հատվածներ Բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի, XX դարի և վրաց կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից, օրինակ, «Շեմքմեդուրի նաղուրի», երկար կախեթական մրավալժամիերի, ռաճական «Մաղլա մթաս մողգա ուցխո փրինվելի», «Սուրբ Աստված» տաղարանը (Ջ. Փալիաշվիլու տարբերակը), աֆրիկական բազմաձայնության նմուշ՝ “Yangissa”/“Banga Banga”/“Bobangi”, *ավստրիական ժողովրդական երգ՝ “Mum’s Choice”*; Բ. Կվերնաձե՝ *երգեր, կինոերաժշտություն*, Գ. Ղանչելի՝ «Սոխքս» *ձայնային-սիմֆոնիկ մինիատյուրան (հատվածներ)*, Լ. Բեթհովեն՝ *դաշնամուրային համերգ #5*, Ռ. Շտրաուս՝ «Դոն Ջովանի» *սիմֆոնիկ պոեմը (հատվածներ)*, Լ. Բեթհովեն՝ *IX սիմֆոնիան (հատվածներ)*, Պ. Չայկովսկի, Գ. Մալեր՝ *V սիմֆոնիան, IV մաս՝ Adagietto*; Կ. Օրֆ՝ «Կարմինա Բուրանա» *(հատվածներ)*, Բ. Բարտոկ՝ *երաժշտություն լարային, հարվածային գործիքների և չեղեստայի համար*, Դ. Շոստակովիչ՝ *լարային կվարտետ #3, III մաս, V սիմֆոնիա, I մաս*, Դ. Բրուբեկ՝ *ջազային կոմպոզիցիա “Take Five”*, G. Weiss-B. Thiele - *“What a Wonderful World”*, J. Herman’s Show – *“Hello Dolly”*, G. Gershwin – *“Porgy and Bess” (հատվածներ)*, L. Weber *“Super Star” (հատվածներ)*, A. Cooper - *School’s Out for this summer և այլն*: